Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՎԵՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՐԿՐԻ ԱՊԱՎԵՆԸ-2

Անմոռաց հանդիպումներ

«Դիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ-2019

ՀՏԴ 821.19-94:355
ԳՄԴ 84(5Հ)-4+68.4
Գ-888

Գրիգորյան Վերա
Գ-888 Երկրի ապավենը - 2. *Անմոռաց հանդիպումներ*/
Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս» հրատ., 2019, 160 էջ:

Գրքույկում պատմվում է «Սատարում հարազատ բանակին» ռազմահայրենասիրական կոչի շրջանակներում հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներից կազմված Նախաձեռնող խմբի՝ Պաշտպանության բանակի զորամասերի հետ հանդիպումների մասին, որոնք ՊՆ և ՊԲ համապատասխան օղակների հետ համաձայնեցված՝ իրականացրել է գրքույկի հեղինակը՝ խմբի ղեկավար, Արցախյան պատերազմում անհայտ կորած ազատամարտիկի մայր, ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը:

ՀՏԴ 821.19-94:355
ԳՄԴ 84(5Հ)-4+68.4

ISBN 978-9939-1-0908-4

□ «Դիզակ պլյուս» հրատ., 2019
□ Վերա Գրիգորյան, 2019

ԽՄԲԱԳՐԻ ԽՈՍՔ

«Երկրի ապավենը-2» Վերա Գրիգորյանի թվով 21-րդ գիրքն է: Ինքնատիպ է ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանի գրիչը՝ մտերիմ ու տպավորիչ, խռովահույզ ու փոթորկոտ, ու միշտ հավատով, հույսով ու լույսով լեցուն՝ առ այն, որ Արցախյան պատերազմում անհայտ կորած տղաները մի օր երազի թեւերով՝ կարոտի ճամփաներով, տուն կդառնան: «Բանակն իր թիկունքին, իր կողքին պիտի զգա մեր կենդանի շնչառությունը, մեր ոչ միայն հոգեւոր, այլեւ՝ ֆիզիկական ներկայությունը»՝ սա՛ է հեղինակի կարգախոսը, եւ գրքում զետեղված պատումներն ա՛յդ մասին են: Հայրենյաց պաշտպանների ճիշտ աշխարհայացքի ձեւավորումը, հայրենապաշտական գաղափարների սերմանումը, հոգեւոր սննդի մատուցումը հայ անվեհեր զինվորներին՝ սա՛ է համարում օրվա հրամայականը Նախաձեռնող խումբը, եւ գրքի էջերում հանգամանալից ներկայացված է այդ տքնաջան աշխատանքի արդյունքի ձեռքբերումը: «Հայոց բանակի զինվորը լույսի՛ զինվոր է»,-համոզված է գրքի հեղինակը, եւ բոլորս կիսում ենք այդ հեղինակավոր կարծիքը: «Ժողովուրդ եւ բանակ՝ մեկ մարմին, մեկ հոգի»՝ այս անխախտ սկզբունքով է առաջնորդվում Վերա Գրիգորյանը՝ գրքի էջերում ներկայացնելով «Սատարում հարազատ բանակին» Նախաձեռնող խմբի այցելությունները ԱՀ և ՀՀ ՊԲ զորամասեր:

ՍՈՖՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Սիրելի ընթերցողնե՛ր

Խոստացածին համաձայն՝ ներկայացնում ենք «ԵՐԿՐԻ ԱՊԱՎԵՆԸ» գրքի 2-րդ մասը, որն ընդգրկում է Ապրիլյան պատերազմից այս դին ընկած ժամանակաշրջանը: Կարդալով այն, դուք կհանդիպեք ինչպես հին, այնպես էլ նոր դեմքերի, որոնցով ուժեղ ու մարտական է մնում մեր բանակը. տարբեր աստիճանների ու պաշտոնների տեր սպաների եւ շարքային զինվորների, ովքեր աչալրջորեն հսկում են պետական սահմանը: Եվ նրանց շարքում՝ նոր զինվորացած տղաների, ովքեր պատիվ են համարում կոչվել հայրենյաց սահմանների պաշտպան:

Գրքում, հասկանալիորեն, կհանդիպեք նաեւ ձեզ լավ ծանոթ՝ «Սատարում հարազատ բանակին» Նախաձեռնող խմբի հին ու նոր անդամներին, որոնք շարունակում են սկսած գործը՝ սիրով այցելելով ԱՀ և ՀՀ ՊԲ-ի զորամասեր, նպաստելով բանակ-հասարակություն հույժ ու միշտ անհրաժեշտ կապի շարունակական ուժեղացմանը:

Բարի ժամանց ձեզ՝ ընթերցանությամբ...

ԳԼԽՆԵՐԻՑԴ ՄԱԶ ՀՊԱԿԱՍԻ, ՄԵՐ ԱՐԾԻՎ ՏՂԱՆԵՐ

2017 թվականի ապրիլի 21-ին «Սպարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խումբը, կարելի է ասել՝ աննախադեպ լայն կազմով եղավ Պաշտպանության բանակի Առանձին հետախուզական գումարտակում: Պետք է ասեմ, որ աննախադեպ քանակով էլ նվերներ էինք տարել՝30 արկղ. հիմնականում՝քաղցրավենիք ու հյութեր, ինչը շատ են սիրում տղաները:

Այցի շրջանակում նվերների իրենց «մասնաբաժնով» խմբի կազմում էին. Արցախի Հանրապետության կառավարության աշխատակազմի կազմբաժնի պետ Վարուժան Առաքելյանը, առողջապահության նախարարության համաճարակաբանության եւ հիգիենայի պետական տեսչության պետ Օֆելյա Հարությունյանը, բուժօգնության կազմակերպման բաժնի աշխատանքների համակարգող Կարինե Ալեքսանյան-Արշակյանը, Ստեփանակերտի քաղաքապետարանի վերահսկողության ծառայության պետ Նաիրա Պետրոսյանը, մշակույթի բաժնի վարիչ Կարինե Հարությունյանը, «Ստեփանակերտ» թերթի գլխ. խմբագիր Սոֆյա Սարգսյանն ու լրագրող-պատասխանատու քարտուղար Լիրա Ղալայանը, «Միացյալ Հայաստան» ԵՀԿ նախագահ Արթուր Գրիգորյանը, «Արցախի սոցիալական խնդիրների հիմնադրամի» ներկայացուցիչը, Ստեփանակերտի թիվ 6 հիմնական դպրոցի տնօրեն Արթուր Ավետիսյանը՝ ուսուցչական ու աշակերտական կոլեկտիվների ներկայացուցիչների հետ միասին, «Իդեալ դիզայն» կազմակերպության ներկայացուցիչ Դավիթ Իսրայելյանը, ԱԿԱՀՄ եւ ԶԱՀՄ նախագահներ՝ Վերա Գրիգորյանը, Արթուր Առստամյանը, Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանը, ՊԲ ռազմահայրենասիրության բաժնի ներկայացուցիչ, կապիտան Նունե Աբաղյանը, ՊԲ

«Գոյամարտ» ծրագրի լրագրող, լեյտենանտ Հարություն Մկրտչյանը եւ օպերատոր, շարքային Դավիթ Քեշիշյանը:

Զորամասում մեզ դիմավորեց հրամանատարը՝ փոխգնդապետ Արմեն Պետրոսյանը՝ հրամկազմի անդամների հետ միասին, որից հետո մենք ականատես եղանք շատ հետաքրքիր ու ոգեւորիչ տեսարանի՝ հետախույզները ցուցադրեցին ձեռնամարտի վարժություններ…

Դրանց ավարտից հետո սկսվեց հանդիպման «պաշտոնական» մասը: Գումարտակի անձնակազմի առջեւ ելույթ ունեցան Վարուժան Առաքելյանը /խոսեց Արցախյան պատերազմում, ինչպես նաեւ առհասարակ, հետախուզական գործի կարեւորության եւ մեր փառապանծ հետախույզների դրսեւորած խիզախության՝ եթե ոչ սխրանքի մասին/, Կարինե Արշակյանը՝ առողջ ապրելակերպի կանոնների եւ հատկապես բանակում դրանց կիրառման անհրաժեշտության մասին՝ հանուն առողջ օրգանիզմով զինվորի, առողջ բանակի, ինչպես նաեւ հանուն համաճարակային բռնկումների բացառման/, այժմ դպրոցի տնօրեն, բայց մինչ այդ երկար տարիներ Պաշտպանության բանակում ծառայած՝ ՊԲ սպա Արթուր Ավետիսյանը, մեր նախկին հրապարակումներից ընթերցողին արդեն քաջածանոթ Արթուր Գրիգորյանը, Կարինե Հարությունյանը եւ այլոք՝ իրենց հայրենասիրական պատգամներում ունկնդիրներին մաղթելով հնարավորինս խաղաղ ծառայություն, մարտական բարձր ոգի ու հմտություն՝ հայրենյաց սահմանները լկտի հակառակորդի հարձակումներից պաշտպանելու ամենօրյա դժվարին գործում:

Այնուհետեւ սկսվեց մշակութային ծրագիրը. երկու ժամանոց համերգ՝ երգ-պար-ասմունքով... Անպատկերացնելի ոգեւորություն էր տիրում օրվա հյուրերի եւ նրանց հյուրընկալողների սրտերում:

Առավել ակտիվ հանդես եկած զինվորականներին պարգեւատրեցինք պատվոգրերով, շնորհակալագրերով ու գրքերով:

Հանդիպման գրաֆիկի սեղմ ու խիտ լինելուն չնայած, հնարավորություն եղավ փոքր-ինչ էլ զրուցելու գումարտակի անցած ուղու եւ առօրյայի շուրջ: Եվ ահա թե ինչ ասաց հրամանատար Մկրտչյանը.

-Մեր անձնակազմը միշտ ու լիովին պատրաստ է ցանկացած պահանջված պահի հարված հասցնելու ագրեսորին: Դա ամենից լավ կփաստի մեր զորային հետախուզության վաշտի 1-ին հետախուզական դասակի հրամանատարը…Դասակ՝ որը, կարող եմ ասել, մեր հպարտությունն է…

Հիշյալ դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ Տիգրան Վերդյանը ժպտում է.

-Անկեղծ ասած՝ այո, ես էլ ոչ առանց հպարտության կարող եմ ասել, որ մեր դասակը գործնականորեն ապացուցել է իր բարձր կայացածությունը:

-Իսկ եթե ավելի կոնկրե՞տ...

-Դե, կոնկրետ… թվարկելու քիչ բան չկա, բայց, կարծում եմ, հերիք է եւ երկու փաստի մասին նշելը: Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի ռազմահետախուզական արշավի մրցավազքում մեր դասակը գրավել է առաջին պատվավոր տեղը… Կա, անշուշտ, ավելի ծանրակշիռ փաստ էլ. Ապրիլյան պատերազմի դաժան մարտերի ժամանակ դասակի տղաները, առանց հրազենի, ձեռնամարտի են բռնվել թշնամու հետ ու հաղթել…Շնորհիվ իրենց մասնագիտական աճի: Շնորհիվ այն ծրագրի, որով ուսուցանում, վարժեցնում ենք իրենց: Համեմատաբար խաղաղ օրերին իրենց մատուցվող տեսական ու գործնական պարապմունքներին մեծ լրջությամբ ու պատասխանատվությամբ վերաբերվելու շնորհիվ նաեւ: Պատկերավոր ասված է, չէ՞՝ դժվար՝ սովորելիս, հեշտ՝ մարտի ժամանակ: Այն էլ ասեմ, որ մեր դասակը կազմավորվում է մարզիկների թվից, ու դա էլ է հաջողության կարեւոր գումարելիներից մեկը:

Տղաներին հրաժեշտ ենք տալիս՝ ինքներս էլ լցված հպարտության զգացումով: Գլխներիցդ մազ չպակասի, մեր արծիվներ:

ԵՌԱՏՈՆՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Նախախնամությունն է որոշել թե համաշխարհային պատմության բարդընթաց ընթացքը՝ տարվա տասներկու ամիսներից հայության համար խորհրդանշանային է ընտրվել մայիսը. իսկ խորհրդանշում է այն հայոց հաղթանակներն՝ սկսած Ավարայրից ու հասած մեր օրերը: Մայիսին առավել լիաթոք է շնչում հայը՝ հիշելով Սարդարապատն ու Շուշին՝ երկուստեք որքան անհավանական թվացած աշխարհին, այնքան էլ նրան զարմացրած իր իրական լինելով: Երեւի պատմության մեջ այդպես են տեղի ունենում հրաշքները… Սակայն ցանկացած հրաշք չի կարող տեղի ունենալ առանց գործող անձ /եր/ի կամ այլ կերպ ասած՝ հերոսների: Այդպես է անգամ հեքիաթներում… Բայց կյանքը հեքիաթ չէ, եւ իրական հերոսներին ոչինչ փրկել չի կարող, եթե չլինեն նրանց վեհ ու խիզախ կամքն ու ոգին: Արցախյան ազատամարտը հերթական անգամ ապացուցեց այդ ճշմարտությունը: Իր աշխարհագրական դիրքով իսկ անառիկ Շուշին, կարելի է ասել՝ մեկ օրում հայ ազատամարտիկի կողմից վերադարձվեց ազգին… Գերին ազատություն ստացավ հարազատի ձեռքով ու կամքով: Եվ այդ օրվանից հայոց արդի հավաքական մտքում գծագրվեց Հայրենահավաքի քարտեզը… հենման կետ ունենալով Արցախի Հանրապետությունը, որը դեռ պիտի անցնի փորձության եւս մեկ շրջանով, վերադառնալու համար իր պայքարի նախակոչին՝ միացմանը մայր Հայաստանի հետ:

Այս տարվա Մայիսյան եռատոնը միջոցառումների հագեցվածությամբ, կարելի է ասել, ավելին էր՝ քան երբեւէ: Եվ անձնական մասնակցությունը դրանցից ցանկացածին հպարտության ու բերկրանքի զգացումով էր լցնում մեր սրտերը: Հակիրճ կպատմեմ ինձ համար առավել հետաքրքրություն ներկայացրած մի քանիսի մասին:

Նախ ասեմ, որ մայիսն սկսվեց ինձ համար կարեւոր եւ սրտիս մոտ մի մարդու՝ Երեւանից Արցախ ժամանելով. «Զինվոր» ՀԿ-ների համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանի, ով եկել էր պատկառելի չափի նյութական օգնությամբ՝ ԱՀ Պաշտպանության բանակի համար: Նա եղավ զորամասերում, ապա եւ ժամանակ գտավ այցելելու մեր՝ ԱՀ Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն, հանդիպում ունեցավ որոշակի իմաստով վերցված՝ մեր որդեկորույս մայրերի հետ, նվերներ բաժանեց նրանց: Շտապեմ ասել, որ վերջիններիս համար խնդիրն, ընդհանրապես, այնքան նվերը չէ, որքան՝ բարոյական սատարման փաստը…

Մայիսի 2-ին Շուշիում «Արցախի կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից /նախագահ՝ Նազիկ Նալբանդյան/ կազմակերպվեց հանդիպում հանրապետության հասարակայնության ներկայացուցիչների հետ, որին հրավիրած էի ու ներկա նաեւ ես: Դա եւ՛ Եռատոնին նվիրված ոգեշունչ խոսքի ցերեկույթ էր, եւ՛ հաճելի ու, միաժամանակ, օրինակելի ժամանցի միջոցառում, որն անցավ բարձր մակարդակով, ուստի, կարծում եմ, անմոռաց հետք է թողել բոլոր մասնակիցների վրա:

Մայիսի 3-ին մեր՝ ԱԿԱՀՄ գրասենյակում, Եռատոնի շրջանակներում, տեղի ունեցավ պարգեւատրման արարողություն: Տասնչորս զինվորականների /սպաների եւ զինվորների/ հանձնեցինք մեդալ, պատվոգիր, շնորհակալագիր: ԱՀ ԱԿԱՀՄ, մասնավորապես, «Հայրենիք եւ հավատ» մեդալին արժանացան Պաշտպանության բանակի ռազմահայրենասիրական բաժնի ավագ սպա, մայոր Դավիթ Օհանջանյանը, նույն բաժնի սպա, կապիտան Դավիթ Սաֆարյանը, գեներալ Իվանյանի անվան Ռազմամարզական ուսումնարանի պետի ԱՀՏԱ գծով տեղակալ, մայոր Հրայր Բաղդասարյանը, ՊԲ Տեղե-

կատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի «Գոյամարտ» ծրագրի հեռուստաօպերատոր Մասիս Բեգլարյանը, ՊԲ «Մարտիկ» թերթի լրագրող, քաղաքական գիտությունների թեկնածու Հրայր Փաշայանը, Արցախի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Նորեկ Գասպարյանը, Արցախի հեռուստատեսության «Օր» լրատվական ծրագրի ղեկավար Նորայր Հովսեփյանը եւ լուրերի բաժնի խմբագիր Գենադի Երեմյանը: «Փակագծերը» բացելով ասեմ, որ մի կողմ թողնելով թվարկածս անձանցից յուրաքանչյուրի վաստակը՝ խոսքով ու գործով հայրենապահությանը ծառայելու մեծ առաքելության մեջ, իր աշխատանքային ու մասնագիտական օժանդակությունն է բերել ու բերում նաեւ մեր՝ ԱԿԱՀՄ գործունեությանը, եւ հատկապես՝ «Սատարում հարազատ բանակին» կոչի մեր Նախաձեռնող խմբի աշխատանքների հստակ իրագործմանն ու լուսաբանմանը:

Մայիսի 5-ին Ստեփանակերտի թիվ 7 դպրոցում անցկացվեց Եռատոնին նվիրված գրական-գեղարվեստական մեծ միջոցառում, որին ինձ եւս ներկա լինելու պատվին արժանացրեց դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանը: Բառեր չեմ գտնում՝ նկարագրելու համար այդ միջոցառման հարուստ բովանդակությունն ու գեղագիտական այն հաճույքը, որ ստացանք մենք՝ միջոցառմանը հրավիրված հյուրերս, աշակերտների հանդես գալուց: Դրական լիցքերով հագեցած հուզական մթնոլորտ էր տիրում միջոցառման ողջ ընթացքում:

Մայիսի 6-ին էլ ինձ ավելի քան անակնկալ մատուցեցին մայրաքաղաքի թիվ 5 հիմնական դպրոցից, որի ղեկավարությունը որոշել էր այցեցել ՊԲ 5-րդ ՊԾ՝ նվերներով շնորհավորելու զորամասի զինվորականության Եռատոնը… Բացատրեմ՝ ինչու եմ դա ինձ համար անակնկալ համարում: Սովորաբար ես էի այդ դպրոցի ներկայացուցիչներին հրավիրում

մասնակցելու «Սատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբի այցերին զորամասեր, իսկ այս անգամ ինձ հրավիրում էին մասնակցելու իրե՛նց նախաձեռնությանը. Ես դա շատ բարձր եմ գնահատում այն առումով, որ կոչի շրջանակում քանի գնում՝ այնքան մեր հասարակայնության ավելի ու ավելի շատ խավեր են ներգրավվում հայրենանպաստ ու բանականպաստ առաքելության մեջ: Իմ այս մտքի հետ համաձայն էին եւ այցի մյուս մասնակիցները, եւ նրանց թվում, մասնավորապես՝ Ստեփանակերտի 5-րդ համայնքի՝ «Արցախի ազատամարտիկների միության» տարածքային ղեկավար Հրաչիկ Նասիբյանը: Եվ ինչն էր հետաքրքիր, որ խմբում լայն ընդգրկմամբ առկա էին դպրոցի ե՛ւ ուսուցչական, ե՛ւ աշակերտական կոլեկտիվների ներկայացուցիչները: Խումբը մեծ թվով նվերներ էր տարել իր հետ եւ դրանք բաժանեց զինվորականներին: Եղանք, ի դեպ, նաեւ հրետանային դիվիզիայում:

Մայիսի 8-ին Պաշտպանության նախարարությունում տեղի ունեցավ հայրենասիրական թեմայով օրինական շարադրությունների մրցույթում հաղթածների պարգեւատրման հանդիսավոր արարողություն: Ասեմ, որ մեր միությունն է՝ ԱՀ ԱԿԱՀՄ-ը, դեռ տարիներ առաջ հանդես եկել նման մրցույթի կազմակերպման նախաձեռնությամբ եւ ութ տարի շարունակ իրականացրել այն՝ համագործակցելով ե՛ւ պաշտպանության, ե՛ւ կրթության ու գիտության նախարարությունների հետ՝ պարգեւատրման արարողությունն էլ անցկացնելով կազմակերպության հուշաթանգարանում: Այս անգամ էլ, իններորդ տարում, հարմար համարվեց, որ դա տեղի ունենա պաշտպանության նախարարությունում՝ միջոցառմանն ավելի հանդիսավոր բնույթ հաղորդելու նպատակով:

ԱՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյանն անձամբ շնորհա-

վորեց մրցույթի հաղթողներին՝ նրանց հանձնելով գրված տեղին համապատասխան նվերներ. երեքական առաջին տեղայիններից ով աշակերտ է՝ թանկարժեք բնանկար եւ Բագրատ Ուլուբաբյանի «Արցախյան գոյապայքար» գիրքը, ով՝ զինվորական է՝ արժեքավոր նվեր ու «Արծիվ» հուշանվեր: Երկրորդ տեղայիններն ստացան «Մենք ենք, մեր սարերը» /Տատիկ-Պապիկ/ հուշարձանի դրվագազարդ հուշանվերը եւ նույնպես «Արցախյան գոյապայքար» գիրքը, երրորդ տեղայինները՝ Սենոր Հասրաթյանի «Ոսկե արծիվ» շքանշանի ասպետները» գիրքը:

Կրթության ու գիտության նախարարության կողմից պարգեւատրմամբ հանդես եկավ Ռայա Մուսայելյանը՝ դրամական պարգեւներ հանձնելով հաղթողներին. 30 հազար դրամ՝ առաջին տեղի համար, 25 հազար՝ երկրորդ, եւ 20 հազար՝ երրորդ տեղի համար: Հաղթած աշակերտների ուսուցիչներն էլ պարգեւատրվեցին 50-հազարական դրամով:

Ես էլ ԱՀ ԱԿԱՀՄ կողմից պարգեւատրեցի թանկարժեք նվերներով լուսանկարչական սարքեր, նորաձեւ ու շքեղ փայտե ալբոմներ՝ նկարները պահելու համար, ինչպես նաեւ ձեռքի ժամացույցներ:

Առջեւում բոլորին սպասում էր մայիսի 9-ը՝ հագեցած արդեն ավելի պաշտոնական միջոցառումներով…

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ
ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ,
կամ այց ՀՀ սահմանամերձ զորամասեր

«Սայրարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խումբը, Արցախի Հանրապետության Պաշտպանության նախարար եւ Պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյանի եւ ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի հետ պայմանավորվածության ու հաստատված պլանի համաձայն, մասնակցությամբ ԱՀ ԱԿԱՀՄ նախագահ, անհայտ կորած ազատամարտիկի մայր, խմբի ղեկավար Վերա Գրիգորյանի եւ անդամներ Արմեն Հովսեփյանի /Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն/, Հանրապետության ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանի, «Միացյալ Հայաստան» հայրենասիրական ՀԿ նախագահ Արթուր Գրիգորյանի, Հանրապետության վաստակավոր լրագրող, բանաստեղծ, երեք ազատամարտիկի մայր Նվարդ Ավագյանի, հունիսի 12-18-ը ներառյալ՝ յուրահատուկ շրջայցով եղավ ՀՀ սահմանամերձ մի շարք զորամասերում:

Համապատասխան մասնագիտական առաքելությամբ խմբին ուղեկցում էին ՊԲ «Գոյամարտ» ծրագրի հեռուստաօպերատոր Դավիթ Քեշիշյանը, ՊԲ «Ասպետ» երգչախմբի մենակատար Սարո Գևորգյանը եւ ՊԲ վարորդ Մերուժան Գրիգորյանը:

Ըստ ծրագրվածի՝ շրջայցն իրականացվել է ՀՀ «Զինվոր» հասարակական կազմակերպությունների համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանի եւ նրան ուղեկցող խմբի հետ համատեղ:

Ստեղրի քաղաքի մատույցներում հանդիպելով միմյանց՝ խմբերը այցն սկսեցին Ագարակում տեղակայված զորամասից: Արցախյան խումբը բաժանվեց երկու մասի. կայազորում հումանիտար եւ մշակութային ծրագիր ապահովողների եւ նվերներով արկղերը դիրքապահներին հասցնողների:

Անհնար է նկարագրել զինվորական կոնտինգենտի ուրախությունը արցախյան պատվիրակության այցի առնչությամբ: Այդ եւ հետագա հանդիպումներին հյուրերին ներկայացնում է Մարգարիտա Խաչատրյանը: Երկժամյա համերգին մասնակցում էին այդ պահին զորանոցում գտնվող բոլորը՝ մեծից մինչեւ փոքրը, շարքային զինվորից մինչեւ գնդապետը: Իսկ երբ պարողների խիտ շրջանում փողփողացին երկու հայկական հանրապետությունների պետական դրոշները, շրջական «պայթեց» հարյուրավոր ձեռքերի ծափերից, որոնք արձագանքվում էին մոտ տարածությունից Ագարակը գրեթե չորս կողմից շրջապատող ժայռաբլուրների կողմից: Երեկոյան աղջամուղջը խտացել էր, եւ զորահրապարակի վրա տեղի ունեցողը հեքիաթային պատկերի տպավորություն էր թողնում…

Ի դեպ, հաջորդ օրերին էլ որ զորամասում լինեինք, երբ համանման պահերին մեջտեղ էին բերվում զույգ դրոշները, նոր թափ էր հաղորդվում ներկաների տրամադրությանը, հպարտության նոր ալիք բարձրանում՝ հուզական նոր լիցքեր գումարում մարդկանց հոգիներում՝ այդ մասին վկայում էին նրանց հայացքները: «Երկու հանրապետություն, մեկ ժողովուրդ՝ մեկ ազգ-բանակ» կարգախոսի կենդանի մարմնացումն էր դա…

Նախաձեռնող խմբի ղեկավար Վերա Գրիգորյանը ԱԿԱՀՄ «Հայրենիք եւ հավատ» մեդալով պարգեւատրեց զորամասի հրամանատար, գնդապետ Կարեն Սեդրակյանին, պատվոգրերով՝ բարեխիղճ եւ օրինակելի ծառայությամբ աչքի ընկնող ավագ լեյտենանտ Արամ Ասրյանին, ավագ սերժանտ Արա Կարապետյանին, շնորհակալագրերով՝ շարքայիններ

Կարեն Հայրապետյանին եւ Արամ Արաբաջյանին: Իրեն հատուկ տպավորիչ ասմունքով հանդես եկավ Արցախի Հանրապետության ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանը, ծնողական պատգամով եւ հայրենասիրական թեմայով սեփական բանաստեղծության արտասանությամբ՝ Արցախյան պատերազմի /1992-94թթ./ մասնակցած երեք ազատամարտիկի մայր, լրագրող ու բանաստեղծուհի Նվարդ Ավագյանը:

Սահմանապահ զորամասի մի մեծ խումբ արժանավորների պարգեւատրեց եւ ՀՀ «Զինվոր» հ/կ-ների համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանը: Եվ կարելի է ասել, որ դա յուրատիպ մի պարգեւ էր, որովհետեւ շնորհակալագիրը մատուցվում էր երկու հասցեով. Այն ուղղված էր լավ ծառայող որդու ծնողներին՝ հայրենյաց համար օրինակելի զինվոր աճեցնելու համար, իսկ փաստաթուղթն ստանում էր զինվորն ինքը՝ տուն ուղարկելու համար… Արդյո՞ք, կա ավելի սպասված եւ ուրախալի այլ ինչ, քան՝ սեփական զավակի մասին նման «ավետիս» ստանալն է…

*

…Անտառաշատ ու գեղեցիկ ճանապարհը մեզ տանում էր դեպի Կովսականի Որոտան, եւ բոլորս հուզված էինք այն մտքից, որ նենգ ու երդվյալ հակառակորդի կողմից ոչ լրիվ դար առաջ բռնազավթված եւ օտարահունչ Կուբաթլիի վերածված հայոց հին բնակավայրն ենք գնում՝ հանդիպելու նրա ներկայիս եւ իսկական տիրոջ՝ Ն զորամասի զինվորական կոնտինգենտի հետ: Մեզ հաջողվում է ծանոթանալ զույգ զորամասերի հրամանատարների եւ հրամկազմի անդամների հետ, հետաքրքիր զրույց ունենալ անգամ բանակային կորպուսի հրամանատարի տեղակալի հետ: Թող ներեն մեզ հարգարժան բարձրաստիճան հրամանատարները՝ հասկանալի պատճառով նրանց բոլորի ազգանունները չհրապարակելու

համար, բայց փոխարենը ամենայն բացախոսությամբ հարկ ենք համարում շեշտել, որ նրանցից յուրաքանչյուրի հետ ունեցած երկու-երեք ժամվա շփումից մեզ համար պարզ դարձավ, թե ինչպիսի փորձված, եւ ամենակարեւորը՝ զինվորների հանդեպ ուշադիր եւ հոգատար /պարզ է՝ նաեւ խիստ ու պահանջկոտ/ հրամանատարների հետ գործ ունեինք…

Այստեղ էլ, ինչպես որ Մեղրիում, Նախաձեռնող խմբի տարած նվերապաշարից «ՀՀ սահմանամերձ զորամասերի դիրքապահ զինվորների համար՝ Արցախի Հանրապետությունից» մակագրությունը կրող հինգ արկղ առանձնացվեց առաջապահ դիրքերում գտնվողների համար… Ամենուր առատ նվերներ է հանձնում եւ տիկին Մ.Խաչատրյանը:

*

…Խմբի հաջորդ «կանգառը» Խնձորեսկում էր: Ն զորամասի՝ տեղիս նորաստեղծ գումարտակում մի առանձնահատուկ խորությամբ հասկացանք՝ ինչ ասել է «զինվորական թափ»… Մեր առյուծ տղաները որքան հմուտ ծառայել, հարկավոր դեպքում նաեւ կռվել, գիտեն, նույնքան էլ գիտեն անզուսպ հրճվանքով գետինը դողացնել իրենց պարով…Ոչ միայն իրենք էին պարում, այլեւ պարաշրջան հրավիրում հյուրերին: Իսկ ո՞վ կարող է տեղում հանգիստ նստել, երբ հնչում է հայկական «Քոչարի»-ն…

Երեկոյան Գորիսում հատուկ հանդիպում ունեինք: Պայմանավորված ժամը հասնելուց տիկին Մարգարիտան մեզ ծանոթացնում է հայոց բանակի հեղինակավոր մի գեներալի հետ, որի ազգանունը, հասկանալիորեն, նույնպես չենք տա, բայց որի հետ զրույցը մեզ թվաց Աստծո պարգեւ: Զրույց՝ որ պարունակում էր բոլորիս հուզող ամենակարեւոր հարցերի պատասխանները: Զրույց՝ որից հոգիդ չհարստանալ չէր կարող…

*

…Ծրջայցի երրորդ օրն է: Սիսիանի զորամասում ենք: Արեւի ճառագայթները խայթում են իշամեղվի պես, բայց ո՞վ է դրան ուշադրություն դարձնողը: Զեփյուռը փորձում է փոքրինչ մեղմել տապի ազդեցությունը, բայց դրանից շահում են լոկ մեր թիկունքում գտնվող՝ ՀՀ եւ ԱՀ դրոշները, որոնք ծածանվելով՝ հա՜ շեղակի խփում են իրենց ամենամոտ գտնվողի ծոծրակին՝ ասես հիշեցնելու համար հայտնի կարգախոսը… Մշակութային միջոցառման ընթացքում հարմար պահ որսալով՝ սրտի խոսք ու մաղթանքով հանդես է գալիս Նախաձեռնող խմբի անդամ Արմեն Հովսեփյանը, ապա խոսափողը հանձնում Քաջիկ Հարությունյանին, եւ վերջինիս հզոր ձայնն ու դերասանական տաղանդն իսկույն ճանապարհ են հարթում դեպի բազմահարյուր զինվոր-ունկնդիրների սիրտը:

*

… Վայք: Ն զորամասի շատ փորձառու հրամանատարի՝ գնդապետ Արծվիկ Գրիգորյանի հետ մեր խմբի «տղաները»՝ Արմենն ու Արթուրը, բարձրանում են «սարերը»՝ նվերներով արկղերն անձամբ դիրքապահ տղաներին հանձնելու համար: Դիրքեր գնալու ցանկություն հայտնող էլ է գտնվում, բայց հրամանատարը «խնդրում է» հասկանալ իրեն. «Դժվարանցանելի հատվածներ կան Ճանապարհին, ինչպես նաեւ…Մի խոսքով՝ ներողամիտ եղեք, վտանգել չեմ կարող, կնոջ տեղ չէ…»: Մշակութային հարուստ ծրագիր է ներկայացվում ուղիղ «պլացի» վրա, եւ այստեղ էլ, ինչպես բոլոր նախորդ զորամասերում, իրենց վոկալ կատարումներով բոլորին հիացնում են երգիչ տղաները. ՀՀ Զինված ուժերի «Զորական» համույթի մենակատարներ Տիգրանը, Հարութը, ԱՀ Պաշտպանության բանակի «Ասպետ» երգչախմբի մենակատար Սարո Գեւորգյանը: Ծրագրի ավարտին հասցնում են վերադառնալ դիրք գնացած-

ները: Նրանք մեզ հետ կիսում են իրենց հիացմունքը հանդեպ եւ՛ հրամանատար Գրիգորյանի, եւ՛ դիրքայինների հետ իրենց փոխշփման: Պատմում են, որ մի զինվորի ծննդյան օրն էր, ու դիրքում լավ էլ նշել են ընկերոջ տոնը: Վերա Գրիգորյանը մեդալներ է հանձնում զորամասի հրամատարին ու շտաբի պետին, հնգական պատվոգրեր ու շնորհակալագրեր էլ՝ այլ զինծառայողների:

*

…Շրջայցով նախատեսված վերջին զորամասում ենք: Արարատում: Այստեղ էլ համարյա կրկնվում է նույն օրակարգը: Երկու խմբերի կողմից նվերների բաժանում զինվորներին: Երկժամանոց համերգ՝ պարերով հանդերձ: Խմբանկարների իրականացում:Նկարահանում՝ արցախյան խմբի անդամ, ՊԲ «Գոյամարտ» ծրագրի հեռուստաօպերատոր Դավիթ Քեշիշյանի կողմից:

Վստահ ենք, որ ընթերցողին ներկայացված այցերն ու իրականացված ծրագիրն ամբողջությամբ վերցված՝ յուրատեսակ բացահայտում եղան ինչպես զորամասերի զինվորների եւ հրամանատարական կազմերի, այնպես էլ՝ մեր խմբի համար: Յոթ օրում հասցնել լինել 8 զորամասում՝ համաձայնվեցեք, շատ խիտ ու ծանրաբեռնված գրաֆիկով աշխատել է նշանակում…

«Սարարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խումբը շնորհակալություն է հայտնում ՀՀ եւ ԱՀ պաշտպանության նախարարներին, ինչպես նաեւ հիշյալ այցերի կազմակերպման հետ այս կամ այն չափով առնչված բոլոր սպաներին՝ ուղեւորության կայացմանը նպաստելու համար, ինչպես նաեւ հավաստիացնում՝ որ միշտ պատրաստ է ծառայելու հայրենյաց շահին, ամեն կերպ աջակցելու եւ սարարելու հարազատ բանակին:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՆԱԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՈՆԿՐԵՏ ԳՈՐԾՈՎ

...Հայրը խոսում էր հուզմունքով ու հպարտությամբ, եւ նրա զգացմունքները հասկանալի էին հարյուրավոր ունկնդիրների համար, որոնց մեծ մասի հագին զինվորական հաքին էր...- Նա եկել էր հեռվից՝ Արարատից, իր զույգ որդիներին տեսության, եւ, հեւոտ խոստովանեց ինձ, այդ անգամ չէր զգացել ոչ ժամանակը, ոչ տարածությունը, որովհետեւ այցը համընկել էր ավագ որդու՝ Մովսեսի զորացրման իրողության հետ, եւ ուրեմն, վերադարձին իր հետ տուն պիտի տաներ նրան... Նա՝ Արարատի քաղաքապետի օգնական, իսկ ավելի վաղ 23 տարվա մանկավարժական ու դասախոսական գործունեությամբ զբաղված Գառնիկ Մարգարյանը տղայով հպարտանալու իրավունք իրո՛ք ուներ...

Ապրիլյան պատերազմի ժամանակ աչալուրջ տղան ժամանակին նկատել էր հակառակորդի տանկի «գողեգող» առաջխաղացումը՝ կանխելով տեղի ունենալիք հավանական ողբերգությունը… Ամիս անց, իսկ ավելի ստույգ՝ Մայիսի 9-ի տոնական օրը, հենց դիրքում էլ նա պարգեւատրվել է «Քաջարի մարտիկ» կրծքանշանով:

Մյուս որդին՝ Զավենը դեռ մի տարի ունի առջեւում. եղբայրներով որոշել էին ծառայել նույն գնդում, եւ հրամանատարությունն ընդառաջել է նրանց ցանկությանը: Զավակներին տեսության գալուց հայրը սովորաբար դատարկաձեռն չէր ներկայանում. ամեն անգամ, այսպես ասած՝ հանրօգուտ ինչ-որ նախաձեռնությամբ է գալիս: Նշենք գոնե մեկը. պատկառելի քանակությամբ հետաքրքիր գրքեր է բերել զորամասի գրադարանի համար…

Բայց ինչո՞ւ «Սատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբի Պաշտպանության բանակի զորամաս կատարած հերթական այցի մասին պատմելիքս, խախտելով

իմ իսկ ընդունած մշտական «սխեման», սկսեցի նրանից՝ Գառնիկ Մարգարյանից…Որովհետեւ նա դեռ օրեր առաջ զանգել էր Արարատից, ցանկություն հայտնելով միանալ Խմբին, զինվորների համար որոշակի գումարի նվերներով աջակցել նրան: Ահա այդպիսի անձնավորություն է նա: Ասում է.«Արցախն ինձ համար դարձել է մեծ սեր ու կարոտ… Զավենս էլ որ ավարտի ծառայությունը, ի՞նչ պիտի «պատճառ բռնեմ»՝ այստեղ գալու համար»: Ու լցվում են աչքերը…Արի ու մի հավատա մարդու անկեղծությանը:

Իսկ հիմա բացատրեմ. «Սատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խումբը ս.թ. հուլիսի 23-ին փաստորեն արտահերթ, շնորհավորական այցով, եղավ Պաշտպանության բանակի Չորրորդ պաշտպանական շրջանի զորամասում՝ կապված վերջինիս ստեղծման 25-ամյակի հետ… Զորամասի տարածք հասնելուց խումբը /Վերա Գրիգորյան, Արմեն Հովսեփյան, Քաջիկ Հարությունյան, Արթուր Գրիգորյան, Գառնիկ Մարգարյան, Լուսինե Մարտիրոսյան, Աննա Մկրտչյան, Նունե Աբաղյան, Մարատ Աբրահամյան/ տոնական-պաշտոնական միջոցառումից առաջ հանդիպում ու նախնական հակիրճ զրույց ունեցավ հրամկազմի հետ:

Հանդիսավոր հանրահավաքում զորամասի ստեղծման, անցած մարտական ուղու եւ զինվորական առօրյայի մասին զեկուցմամբ հանդես եկավ զորամասի շտաբի պետ, փոխգնդապետ Սեւակ Աբրահամյանը, շնորհավորական ուղերձներով ու ելույթներով՝ զորամասի ԱՀՏԱ բաժնի մայոր Կարեն Սարուխանյանը, ես՝ որպես Նախաձեռնող խմբի ղեկավարը, հոբելյար զորամասում ծառայող երկու զինվորի ծնող Գառնիկ Մարգարյանը, սպաներ, զինվորներ…Զորամասի հրամանատարությունն առօրյա ու մարտական ծառայությունում աչքի ընկած մի մեծ խումբ զինվորականների պարգեւատրեց պատվոգրերով, շնորհակալագրերով ու գերազանց ծառայող զինվորների ծնողներին ուղղված շնորհակալական նամակներով:

Ես էլ մե՛ր կազմակերպության /ԱԿԱՀՄ/պատվոգրերով ու շնորհակալագրերով պարգեւատրեցի արժանավոր մի շարք սպաների եւ զինվորների:

Խումբը զորամաս էր ներկայացել 300-ից ավել նվերներով. տոպրակներով քաղցրավենիք, հյութեր, առաջին անհրաժեշտության պարագաներ, պատվոգրեր, շնորհակալագրեր, գրքեր, որոնց ձեռքբերմանն աջակցել են նախկին ազատամարտիկ եւ ոստիկանության աշխատող, այժմ թոշակառու Ալիկ Հարությունյանը, Գառնիկ Մարգարյանի մասին ընթերցողն արդեն գիտի… եւ իմ ընտանիքը:

Ի դեպ, պարտքս եմ համարում երախտագիտություն հայտնել նաեւ մշակութային ծրագրի իրականացման համար Խմբում ոչ միայն երիտասարդ երգչուհի Աննա Մկրտչյանի, այլեւ համապատասխան երաժշտական սարքերի եւ հնչյունային օպերատորի ներկայությունն ապահովողին, այն է՝ Ստեփանակերտի մշակույթի քաղաքային տան տնօրեն Ռաֆիկ Ավանեսովին:

Շնորհակալություն, այո՛, բոլորին:

Տեղի ունեցավ համերգ. երգ, պար, արտասանություն, որին ակտիվորեն մասնակցում էին եւ զորամասի զինծառայողները: Մեր խմբի անդամ, Ժողովրդական դերասան Քաջիկ Հարությունյանի աննման ասմունքին, արդեն նշածս Աննայի եւ Ստեփանակերտի երաժշտական ուսումնարանի ուսանողուհի Լուսինե Մարտիրոսյանի, ինչպես նաեւ Պաշտպանության բանակի 8-րդ հատուկ մոտոհրաձգային գումարտակի զինվոր Մարատ Աբրահամյանի վոկալ կատարումներին ունկնդիրներն արձագանքում էին ծափողջույններով: Մարատի ելույթն, ի դեպ, կարելի է համարել խորհրդանշական այն առումով, որ նա միջոցառմանն իր մասնակցությամբ միաժամանակ 8-րդ ՀՄՀԳ-ի շնորհավորական ուղերձն էր փոխանցում հոբելյար զորամասին…

Մշակութային ծրագրին առավել ակտիվորեն մասնակցած մի շարք զինվորականների ես շնորհակալագրեր ու գրքեր հանձնեցի:

Թեւավոր խոսքն ասում է. «Արժանին՝ արժանավորացն»…

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ՆԱԽՕՐԵԻՆ ԱՅՑ ԶՈՐԱՄԱՍ՝ ՀՈԳԵՎՈՐ ՆՎԵՐՈՎ

«Սարարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խումբն այս անգամ՝ 2017 թվականի օգոստոսի 29-ին, Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի զորամաս մեկնեց հատուկ կարգախոսով՝ տոնական հոգեւոր նվեր մատուցել զինծառայողներին Անկախության հռչակման՝ առաջիկա հերթական տարեդարձի առնչությամբ:

Եղանք ՊԲ Հյուսիսային ուղղության Ն զորամասում, անցկացրինք մշակութային խոշոր միջոցառում:

Մեզ հետ տարել էինք հիանալի երգիչ մենակատարների. «Ղարաբաղ» երգի-պարի համույթից՝ Արայիկ Սարգսյանին, «Մենք ենք, մեր սարերը» համույթից՝ Արման Շապոյանին, «Վելանս» համույթից՝ Լուսինե Մարտիրոսյանին եւ Անի Սաղյանին…Պաշտպանության բանակի 8-րդ մոտոհրաձգային առանձին գումարտակից էլ՝ Մարատ Աբրահամյանին, ով երգելուց բացի նաեւ իրենց զորամասի անունից հանդես եկավ տոնի առթիվ շնորհավորանքի խոսքով:

Զորամասի մուտքի մոտ բարձր տրամադրությամբ մեզ դիմավորեց հրամանատար, գնդապետ Արմեն Գյոզալյանը՝ շտաբի պետ, գնդապետ Սմբատ Ավագյանի եւ մարտական պատրաստության գծով հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Արթուր Մարգարյանի հետ միասին: *Կարճ զրույցից հետո, որը ոչ միայն Օրվա ու Հանդիպման պատճառի խորհուրդն ուներ, այլեւ բանակ-հասարակություն կապի ամրապնդման մեր մշտական նպատակը, անցանք մշակութային միջոցառմանը:*

Ասեմ, որ արդյունքում ստացվեց համարյա ընդհանուր ծրագիր, որովհետեւ ընթացքում հրամանատարությունը դրսեւորեց

հետաքրքիր նախաձեռնություն, որն առավել բովանդակալից ու հիշարժան դարձրեց հանդիպումը:

Նախատեսված մեկ ժամանոցի փոխարեն համերգը տեւեց 3 ժամ, անցավ արտակարգ հագեցած: Հնչեցին հիմնականում հայկական հայրենասիրական ու ժողովրդական երգեր:

Դե, իսկ պարն անտարբեր չթողեց համարյա ոչ-ոքի: Պարող զինվոր տղաների էներգիայից ապշել կարելի էր, ինչպես ասում են՝ նրանց ոտքերի տակից կայծ ու փոշի էր ելնում օդ...

Ուրախության ինչպիսի՜ ալիք բարձրացավ, երբ հրամանատարությունը...լավագույն պարողի մրցույթ հայտարարեց վաշտերի միջեւ: Ուղղակի տեսնել էր պետք, թե դրանից հետո մթնոլորտն ի՜նչ աստիճանի թեժացավ:

Առանց չափազանցացնելու ասեմ նաեւ այն մասին, որ աչքալուսանքի պես հնչեց մրցույթում հաղթած 4 զինվորի հրամանատարության կողմից արձակուրդ տալու հրամանը: Իսկ երբ մի մեծ խումբ զինծառայողների էլ արժանացրին խրախուսանքի այլ միջոցների, մեծատարածք ու լեփ-լեցուն դահլիճում երկար ժամանակ չէին լռում ծափերը:

Մենք էլ մե՛ր բաժին ուրախությունն ու հոգեւոր նվերը հանձնեցինք մեր զինվորականներին. «Սատարում հարազատ բանակին» Նախաձեռնող խմբի եւ ԼՂՀ ԱԿԱՀՄ անունից ես պատվոգրով պարգեւատրեցի 10 սպայի եւ շնորհակալագրերով 30 հոգու՝ կրտսեր հրամանատարների ու շարքայինների կազմից:

Ընթերցողին պիտի հայտնեմ նաեւ մեր կողմից ներդրվող մի նորույթի մասին. այդ օրվա շնորհակալագրերը կրում էին քիչ-ինչ այլ բնույթ՝ տրվում էին, այո, զինծառայողին, բայց իրականում ուղղված էին նրա գերդաստանին եւ արտահայտում էին շնորհակալություն՝ իրենց հարազատին հայրենասիրության ու բարեխղճության ոգով դաստիարակելու համար /զինվորն ինքը դա կառաքի տուն/:

Բացատրեմ՝ ինչու գերդաստանին: Որովհետեւ այդ բառն ավելի լայն իմաստ ունի, քան՝ զուտ ընտանիքն է կամ էլ ծնողները: Ի վերջո, կան ու լինում են ապագա զինվորներ էլ, ում դաստիարակության գործով, ճակատագրի կամ այլ հանգամանքներով, զբաղվում են ոչ թե ծնողները, այլ, ասենք լիովին կամ առավելապես՝ տատիկ-պապիկներ., հորեղբայր-մորեղբայրները եւ այլն: Երեխայի, դեռահասի դաստիարակության վրա ազդող շատ օղակներ կան, որոնց թվում, անշուշտ, եւ դպրոցը, բայց միշտ էլ առաջին «Ճակատում» գտնվողն ընտանիքն է, իսկ ավելի լայն վերցված՝ ողջ գերդաստանը, տոհմի ազգանունը կրողները… Հայաստանում եւ Արցախում բազմաթիվ են մեծ հարգանքի արժանի գերդաստաններն, ու դրանք են հենց, ինչպես ընդունված է ասել, «երկրի աղը»…

Այդ օրվա մեր առաքելությունն իրականացնելուց հետո որոշեցինք զինվորական ճաշարանում համտեսել ճաշատեսակներն ու եւս մեկ անգամ համոզվեցինք, որ տղաներին մատուցվում է առողջ սնունդ: Դե, իսկ Անկախության օրվա նախընթացի զինվորական շատ համով հարիսան, որ վայելեցինք տղաների հետ միասին, կարծում եմ, երկար է մնալու մեզնից յուրաքանչյուրի հիշողության մեջ…

Ի դեպ, անմոռաց այդ հանդիպմանն է նվիրված եւ Դավիթ Ավանեսյանի փոքրիկ ռեպորտաժը, որում կան, ըստ իս, հետաքրքիր մանրամասներ, ուստի եւ ավելորդ չեմ համարում այն կցել սույն հրապարակմանը՝ լիովին պահպանելով հեղինակի տեքստը:

«ԲԱՆԱԿ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՊՆ ԱՆՍԱՍԱՆ Է

Անկախության տոնին ընդառաջ «Սատարում հարազատ բանակին» Նախաձեռնող խմբի անդամները, ԱՀ ԱԿԱՀ միության նախագահ Վերա Գրիգորյանի գլխավորությամբ, այցելել են հանրապետության հյուսիսային ուղղությամբ տեղա-

կայված զորամասերից մեկը, շնորհավորել զինծառայողներին, հանդիպել զորամասի հրամանատար, գնդապետ Արմեն Գյոզալյանի հետ: Հյուրերը հրամանատարից հետաքրքրվել են առաջնագծում տիրող իրավիճակով, ծառայողական առօրյա խնդիրներով, խոսել այցի նպատակների և առաջիկա անելիքների մասին:

Օրվա երկրորդ կեսին հյուրերը զորամասում հանդես եկան համերգային ծրագրով: Երիտասարդ երգիչ-երգչուհիների կատարումները տոնական տրամադրություն պարգևեցին զինծառայողներին: *«Մեր զորամասում այսօր գեղեցիկ միջոցառում կազմակերպվեց, ուզում եմ շնորհակալություն հայտնել «Սպարում հարազատ բանակին» Նախաձեռնող խմբին՝ առօրյա մեր ծառայությունը հետաքրքիր և բովանդակալից դարձնելու համար: Նմանատիպ միջոցառումները, անշուշտ, դրական ազդեցություն են թողնում զինվորների բարոյահոգեբանական վիճակի վրա՝ մի պահ կտրվում ենք առօրյա մեր ծառայությունից և հետաքրքիր ժամանակ անցկացնում»,- մեզ հետ զրույցում նկատեց ջոկի հրամանատար, սերժանտ Լևոն Մկրտչյանը:*

Տոնական լավ տրամադրությունն ու անմիջական ջերմ միջավայրը ոգևորեց ներկաներին և հայրենասիրական երգ ու պարով համերգային ծրագրին միացան նաև զորամասի զինծառայողները: Տոնական միջոցառման ավարտին ԱՀ ԱԿԱՀ միության նախագահ Վերա Գրիգորյանը ծառայության ընթացքում աչքի ընկած և օրինակելի կարգապահության համար մի շարք զինծառայողների պարգևատրեց պատվոգրերով: *«Արցախի Հանրապետության անկախության հռչակման հերթական տարեդարձի նախաշեմին «Սպարում հարազատ բանակին» Նախաձեռնող խումբը որոշեց այցելել ՊԲ մարտական հերթապահություն իրականացնող զորամասերից*

մեկը: Քանի որ անկախության պահապանները մեր զինվորներն են, մենք որոշեցինք լավ տրամադրություն պարգևել նրանց, որպեսզի զինծառայողները բարձր տրամադրությամբ շարունակեն կատարել իրենց հայրենանվեր առաքելությունը: Այսպիսի այցելությունները ավելի են ամրապնդում բանակ- հասարակություն կապը, ուստի՝ մեր այցելությունները ՊԲ զորամասեր կրելու են շարունակական բնույթ»,- վստահեցրեց Վ. Գրիգորյանը:

«Սատարում հարազատ բանակին» Նախաձեռնող խմբի անդամները զինվորական ճաշարանում սիրով համտեսեցին նաև զինվորների համար պատրաստված կերակուրները: *«Ամեն ինչ լավ էր պատրաստված, շատ համով էր, հաճույքով օգտվեցինք զինվորական խոհանոցից: Անկեղծ ասած, ինչ դուր եկան զինվորների համար պատրաստված ուտեստները»,- տպավորություններով կիսվեց երգչուհի Լուսինե Մարտիրոսյանը:* Օրվա վերջում Վ. Գրիգորյանը ԱԿԱՀ միության թանգարանում «Հայրենիք և հավատք» մեդալով պարգևատրեց նաև անհայտ կորած ազատամարտիկ Արմեն Սարգսյանի որդուն՝ միջոցառման մասնակից, երգիչ Արայիկ Սարգսյանին»:

«ՄԱՐՏԻԿ»

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԲԵՐԿՐԱՆՔԸ

Միանգամայն անկեղծ եմ ասում. «Սատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբի համար յուրաքանչյուր այց Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի զորամաս, առանց չափազանցության՝ վերածվում է տոնական օրվա...

Քեզ փաստորեն անծանոթ զինվորների հետ հանդիպումը գորովանքով ու հպարտությամբ է լցնում սիրտդ, նրանց աչքերին նայելով, նրանց կատակները լսելով ՝ մտածում ես. ի՞նչ տղաներ են հայրենիքիդ պաշտպանները, գյուղ ու քաղաքներից եկած այս տասնութ-քսան տարեկանները, որոնք ձգտում են ցույց չտալ իրենց հոգնությունը մտավոր թե ֆիզիկական լարված պարապմունքներից, դիրքում անցկացրած հերթապահությունից…Լոկ մի բան է, որ չեն ուզում թաքցնել. իրենց կարոտը տան ու հարազատների նկատմամբ: Նայում ես, այո, նրանց աչքերին, եւ կարոտն այդ ասես փոխանցվում է քեզ, դառնում քոնը, եւ նրանց մեջ տեսնում ես քո հարազատին, քո զավակին, ով նույնպես ժամանակին ծառայել է այդ բանակում, կամ հենց ծառայում է հիմա: Ու քնքշանք ես զգում բոլորի հանդեպ, եւ մտքում աղոթում Աստծուն. «Տե՞ր, ողջ ու անվնաս պահիր Հայոցս զարմերին, եւ տուր աշխարհիս անխափան խաղաղություն»:

«Սատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբի հերթական այցը Պաշտպանության բանակ /այս անգամ, ի դեպ, ԱՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի՝ սոցիալ-տնտեսական հանձնախմբի անդամների հետ համատեղ/ տեղի ունեցավ սույն թվականի հոկտեմբերի 4-ին: Եղանք Հարավ-արեւելյան ուղղության Ն զորամասում:

*

Խմբի կազմը, բնականաբար, սովորականից ավելի մարդաշատ էր՝ քսան հոգի. ԱՀ ԱԿԱՀՄ հասարակական կազմակերպության նախագահ Վերա Գրիգորյանս, ԱԿԱՀՄ եւ ԶԱՀՄ հ/կ-ների ներկայացուցիչներ, «Աֆղանական պատերազմի վետերաններ» հ/կ-ի աշխատակազմի ղեկավար Արմեն Գեւորգյանը, ԱՀ առողջապահության նախարարության վիճակագրական-վերլուծական բաժնի պետ Ագապի Հայրունին եւ գլխավոր մասնագետ Մարգարիտա Շահնազարյանը, «Միացյալ Հայաստան» հայրենասիրական հ/կ նախագահ Արթուր Գրիգորյանը, ՊԲ ռազմահայրենասիրական բաժնի սպա՝ կապիտան Նունե Աբաղյանը, ՊԲ «Մարտիկ» թերթի լրագրող Հրայր Փաշայանը, ՊԲ «Գոյամարտ» հեռուստածրագրի օպերատոր Դավիթ Քեշիշյանը, ԱրՊՀ առաջին կուրսի ուսանող Պարույր Մարտիրոսյանը, Ստեփանակերտի մշակույթի տան ձայնային ռեժիսոր Ալբերտ Հակոբյանը, «ՎԵԼԱՆՍ» վոկալ համույթի կատարողական կազմը՝ համույթի ղեկավար Վիլեն Միքայելյանի գլխավորությամբ:

Զորամասի տարածքում խմբին դիմավորեցին 5-րդ գումարտակի հրամանատար՝ փոխգնդապետ Գերասիմ Բաբաջանյանը եւ զորամասի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ՝ փոխգնդապետ Արա Քամալյանը:

Հանդիպման ծրագրի հետ հրամկազմին ծանոթացնելուց հետո անցանք նախատեսվածի իրագործմանը:

Մեր միաժամանակ եւ ունկնդիրները, եւ մշակութային ծրագրի հանդիսատեսներն այդ օրը նորակոչիկներն էին: Տեսնել էր պետք, թե նրանք որքան ուրախ էին այդ հանդիպման համար: Ես նրանց ներկայացրի մեր խմբի անդամներին, որից հետո հայրենասիրական զրույցներ ունեցանք ելույթների տեսքով: Շատերը հանդես եկան «սրտի խոսքով». վերոնշյալ

Արմեն Գեւորգյանը, Արթուր Գրիգորյանը, Մարգարիտա Շահնազարյանը, գումարտակի հրամանատարն ինքը եւ ուրիշներ, եւ բոլորի խոսքում, մտքերի ընդգրկման սահմաններից անկախ, առկա էր երկու պատվիրան. լինել աչալուրջ եւ զենքի հետ զգույշ, ծառայել հայրենիքին բարեխղճորեն ու անձնվիրաբար:

Նույնիսկ մեզ՝ «դրսից եկածներիս» համար էր հետաքրքիր փոխգնդապետ Բաբաջանյանի ելույթն՝ ուղղված նորակոչիկներին: Այդ տղաները երկու ամսից հետո պետք է զինվորական երդում տան եւ այսօր գտնվում են դրան նախապատրաստվելու փուլում, իսկ պարտադիր զինծառայության վեց ամիսը բոլորելուց հետո լրացնելու են դիրքային ծառայություն իրականացնողների շարքերը: Ի՞նչ պետք է անել՝ լավ դիրքային դառնալու համար, վտանգի դեպքում հայրենյաց սահմանը պաշտպանել կարողանալու համար՝ ողջ մնալով հանդերձ. որպես գլխավոր միտք՝ այս «մեխին» էր անընդհատ խփում հրամանատարը…

Բավականին ընդարձակ էր մեր նախատեսած մշակութային ծրագիրը: Տեղի ունեցավ մեծ համերգ: Զինվորներին շատ դուր եկան «ՎԵԼԱՆՍ» համույթի կատարումները. նրանց մատուցվեցին հայրենասիրական ու ժողովրդական երգեր: Երգողներ եղան եւ զինվորների թվից: Եվ, իհարկե, ինչպես միշտ, թնդաց նաեւ հայկական պարը, որում ուղղակի փայլեցին նորակոչիկներից շատերը: Պարը շրջան էր մտցրել նրանց, եւ պարող այդ տղաների էներգիայից ապշել կարելի էր:

Գումարտակի հրամանատարի խոսքով՝ նման համերգները կենսուրախության զգալի լիցքեր են հաղորդում զինվորներին, եւ ըստ այդմ՝ նման հանդիպումները շատ են ցանկալի…

Ես մեր կազմակերպության «Հայրենիք եւ հավատ» մեդալով սրտանց պարգեւատրեցի զորամասի հրամանատարի

ԱՀՏԱ գծով տեղակալ Արա Քամալյանին՝ նկատի ունենալով ոչ միայն այդ, այլեւ այլ զորամասերում նրա ծառայությունը եւ այդ ընթացքում մեր բազմաթիվ հանդիպումները նրա ու զինվորների հետ, որոնց ընթացքում հասցրել եմ լավ ճանաչել պատասխանատվության բարձր զգացման տեր այդ սպային: Պատվոգիր հանձնեցի փոխգնդապետ Գերասիմ Բաբաջանյանին, շնորհակալագրեր՝ տասնհինգ նորակոչիկի, ովքեր իրենց եՀ բարեխիճ են դրսեւորում ծառայության մեջ, եՀ ակտիվորեն մասնակցում մշակութային միջոցառումներին: Ոմանց էլ բաժանեցի գրքեր:

Հետդարձի ճանապարհին խմբի անդամները հանդիպումից ստացած իրենց տպավորություններից էին խոսում անընդհատ: Բացարձակապես հաճելի եւ անմոռաց տպավորություններ…

ՏԱՐԵՄՈՒՏՅԱՆ ԱՅՑ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԶՈՐԱՄԱՍ,
կամ պարվա ծրագրի
«կապարողականի ամփոփման» առիթ

Վերջին այցն՝ արդեն հեռացող պարում: Այն հեպաքրքիր էր, թեև...մեղք է այդպիսին չորակել մեր՝«Սապարում հարազատ բանակին» Նախաձեռնող խմբի յուրաքանչյո՛ւր այցը Պաշտպանության բանակի ցանկացած զորամաս: Եվ այսպես՝ դեկտեմբերի 14-ին մեր նախաձեռնող խումբը ԱՀ պաշտպանության նախարարին առընթեր Հասարակական խորհրդի սոցիալական խմբի հետ եղավ ՊԲ 3-րդ պաշտպանական շրջանում:

Մեր խմբի մշտական անդամներ Արմեն Հովսեփյանից եւ Արթուր Գրիգորյանից բացի, խումբը ներկայացնում էին եւ Զոհված ազատամարտիկների հարազատների միության վարչության անդամ Լաուրա Նասիբյանը, ես՝ որպես եւ «Սատարում»-ի նախաձեռնող խմբի ղեկավար եւ միաժամանակ ԱԿԱՀՄ նախագահ, «Աֆղանական պատերազմի վետերաններ» հ/կ-ի աշխատակազմի ղեկավար Արմեն Գեւորգյանը, ՊԲ ռազմահայրենասիրական բաժնի սպա, կապիտան Նունե Աբաղյանը, գեներալ Իվանյանի անվան ռազմամարզական ուսումնարանի սան Էդվարդ Գեւորգյանը, Ստեփանակերտի մշակույթի տան երգիչ-մենակատար Մավրիկ Ավանեսյանը, ՊԲ «Գոյամարտ» հեռուստածրագրի օպերատոր Դավիթ Քեշիշյանը:

Քանի որ այցը տեղի էր ունենում Ամանորի եւ Սուրբ Ծննդյան նախատոնական օրերին, զորամաս ներկայացանք առատ նվերներով՝առաջին անհրաժեշտության եւ անձնական հիգիե-

նայի պարագաներով, ինչպես նաեւ քաղցրավենիքով ու ոչ ալկոհոլային խմիչքներով 26 արկղ, որից 10-ը, զորամասի հրամանատարության հետ համաձայնեցված, ուղարկեցինք այդ օրը մարտական հերթապահությունում գտնվող դիրքապահներին, իսկ 16-ը հատկացրինք գնդի ստորաբաժանումներին:

Զորամասի մուտքի մոտ մեզ դիմավորեց ստորաբաժանման հրամանատարությունը: Նրան նախապես ծանոթացրինք այցի նպատակին, շրջեցինք զորամասում, ծանոթացանք զինվորների կենցաղային պայմաններին, հետաքրքրվեցինք սննդի որակով ու կալորիականությամբ, եղանք բուժկետում, զրուցեցինք բժիշկների եւ ստացիոնար բուժման մեջ գտնվող հիվանդների հետ, նրանց եւս բաժին հանեցինք տարած նվերներից...

Այնուհետեւ մեր ուժերով տեղի ունեցավ համերգ, որին, ինչպես միշտ, նախորդեցին «օրվա հյուրերի» հայրենասիրական ելույթներն ու ծնողական խորհուրդ-պատվիրանները: Արտահայտվեցին գրեթե բոլորը, այդ թվում՝ զորամասի ավագ սպաները:

Համերգն (երգ, պար, ասմունք) ու հանդիպումը ոգևորեցին զինվորականներին: Եվ դա շեշտվեց շատերի խոսքի մեջ: Նկատեցինք նաեւ, թե տղաներն ինչպիսի ուշադրությամբ էին լսում զորամասի սարկավագ Արտակ Ղեւոնդյանին: Խելացի հոգեւորականի, ասել է թե՝ Աստծո սպասավորի խոսքն, ինչ խոսք, հոգեւոր սնունդ է ունկնդրի համար...Մեզ էլ գոհացրեց զորամասի բարեկարգված ու տեսքի բերված տարածքը. ամենուր աչք էին շոյում մաքրությունն ու խնամքը:

Անզեն աչքով էլ տեսանելի է, որ ներկայում բանակում մեծ բարեփոխումների գործընթաց է գնում, յուրացվում են զենքի ու տեխնիկայի նոր եւ նորագույն տեսակներ, եւ սպաներն ու զինվորները դրանց տիրապետելու հրամայականն ունեն:

Նրանք ջանք ու եռանդ չեն խնայում՝ դրան հասնելու համար։ Մեր դիմաց նենգ թշնամին է՝ իր չար նկրտումներով, ու բոլորս պարտավոր ենք պատրաստ լինել դրանց ըստ արժանվույն դիմակայելուն։ Եվ՝ ոչ միայն...

Մեր կազմակերպության անունից հրամկազմից հինգ սպայի պարգեւատրեցի պատվոգրով, ծառայությունում աչքի ընկած, ինչու չէ՝ նաեւ մշակութային միջոցառումներին ակտիվ մասնակցող 15 զինվորի էլ՝ շնորհակալագրով։ Հինգ զինվոր էլ պատվոգրի արժանացան Զոհված ազատամարտիկների հարազատների միության կողմից։

Ի դեպ, նվերների հայթայթման գործում մեզ աջակցողներն էին ԱՀ հարկային պետական ծառայությունը, Աֆղանական պատերազմի վետերանների միությունը, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը, «Հաղթանակ» ՍՊԸ-ն, եւ Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը...

«Սատարում հարազատ բանակին» Նախաձեռնող խումբը կատարել է 2017թ. բանակի զորամասեր այցելելու իր առջև դրված խնդիրը։ Ավելի կոնկրետ՝ նախորդ տարվա համեմատ, 11 այցով ավել... Այդ թվում եւ Հայաստանի Հանրապետության Մեղրիից մինչեւ Արարատ տեղակայված զորամասեր։

Սուրբ Ծնունդն ու Ամանորը մենք՝ նախաձեռնող խմբի անդամներս, կդիմավորենք գոհության մեծ զգացումով։ Անշուշտ, մեր ողջ ժողովրդի ու նրա փառապանծ բանակի հետ մեկտեղ...

Խաղա՜ղ ու բարի՜ տարեմուտ բոլորիս՝ Արցախում, Հայաստանում եւ... աշխարհի չորս ծայրերում։

*

Քանի որ սույն հոդվածին երկբաղադրիչ վերնագիր ենք ընտրել, կարծում եմ, տեղին է, որ նրա երկրորդ բաղադրչի բացատրությունը, գնահատականով հանդերձ, ներկայացնել փոքրիկ այն տեղեկատվությամբ, որը հրապարակել է Արցախի Պաշտպանության բանակի «Մարտիկ» թերթը՝ ս.թ. դեկտեմբերյան համարում.

«Ամբողջ տարվա ընթացքում նրանք բանակի հետ էին ու հայրենիքի սահմանները պաշտպանող զինվորականի կողքին: «Սատարում հարազատ բանակին» կարգախոսով եւ մեր երկիրն ավելի պաշտպանված տեսնելու անկեղծ ցանկությամբ, հասարակական տարբեր կազմակերպություններ միավորող կառույցը Վերա Գրիգորյանի ղեկավարությամբ լինելով Պաշտպանության բանակի բոլոր զորամասերում եւ առաջնագծի բոլոր ուղղություններում, բանակային տարին եզրափակել է Կենտրոնական ենթակայության զորամասերից մեկում, նվերներ հանձնել ու խրախուսել զինծառայողներին, շնորհավորել գալիք Ամանորն ու Սուրբ Ծնունդը:

Զորամասում արդեն հասցրել են մտերմանալ Նախաձեռնող խմբի անդամների հետ եւ յուրաքանչյուր հանդիպումից հետո սպասում են հաջորդին: Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները սա համարում են իրենց կարեւորագույն ձեռքբերումն ու կատարված աշխատանքի ամենաանկողմնակալ գնահատականը, հանգամանք, որը նաեւ ուժ է տալիս՝ սկսած գործը հետագայում բազմապատկված եռանդով շարունակելու»:

Նախաձեռնող խմբի տարեվերջյան այցելությունը զորամաս ավարտվել է տոնական մթնոլորտում: Հյուրերն ու տանտերերը միմյանցից բաժանվել են ամանորյա մաղթանքներով եւ նոր տարում հանդիպելու ակնկալիքով»:

ԱՅՑ ԶՈՐԱՄԱՍ՝
ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Մեր Նախաշեռնող խումբը ս.թ. հունվարի 18-ին այցելեց ԱՀ ՊԲ 7-րդ պաշտպանական շրջանի զորամաս: Շուշացնելով՝ պարտքս եմ համարում իմ ու խմբի բոլոր անդամների անունից ասել, որ տպավորությունը քանիցս գերազանցել է մեր սպասածին...

Այս անգամ խմբում, ինձ հետ միասին, առկա էին հանրապետության առողջապահության նախարարության ներկայացուցիչ՝ նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության գլխավոր մասնագետ Սամվել Գասպարյանը, Զոհված ազատամարտիկների հարազատների միությունից՝ Լաուրա Նասիբյանը, ՊԲ բուժակ /այժմ՝ թոշակառու/ Տանյա Առստամյանը, ՊԲ ռազմահայրենասիրական բաժնի սպա՝ կապիտան Դավիթ Սաֆարյանը, ՊԲ «Գոյամարտ» ծրագրի հեռուստաօպերատոր Դավիթ Քեշիշյանը, ՊԲ «Ասպետ» համույթի յոթ կատարողներ, խմբի մշտական անդամ՝ Շ.Ազնավուրի անվան մշակութային կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանը:

Այցը, որի ընթացքի հանգուցային պահերի մասին պատմել եմ ուզում, նվիրված էր Հայոց բանակի օրվան:

Զորամաս հասնելուց հանդիպեցինք հրամանատարի՝ գնդապետ Կարեն Զալավյանի եւ հրամկազմի անդամների հետ: Հանդիպումը կրում էր այցի ծրագրի հետ նրանց նախապես ծանոթացնելու եւ այն համատեղ իրականացնելու ձեւի քննարկման բնույթ:

Այնուհետեւ արդեն հանդիպեցինք զորամասի զինվորական կոնտինգենտի հետ: Մեր ու տղաների միջեւ կայացավ հետաքրքիր ու բովանդակալից զրույց, որն ընթացավ հայրենասիրական բարձր երակով: Զրույցում ներառվել էին նաեւ զին-

վորների առողջապահական խնդիրներին վերաբերող հարցեր, որոնց մի մասը ներկայացրեց առողջապահության նախարարության ներկայացուցիչը, ընդ որում՝ նաեւ պատասխանելով ունկնդիրների հնչեցրած հարցերին: Քանզի ոչ միայն բարոյապես, այլեւ ֆիզիկապե՛ս առողջ բանակն է, որ ի զորու է լուծել պահանջված խնդիրները, անհրաժեշտության դեպքում հետ մղել ագրեսորին, հաղթել նրան:

Այնուհետեւ խումբը բաժանվեց երկու մասի. զորամասի տարածքում համերգ իրականացնողների եւ դիրքերում հերթապահություն կատարողներին այցելողների: Բնական է՝ ոչ դատարկ ձեռքով: Մենք 23 արկղերում նվերներ էինք վերցրել մեզ հետ՝ Բանակի տոնի նախօրյակին երկրի սահմանները հսկող ու պաշտպանողներին շնորհավորելու եւ ուրախացնելու համար: Արկղերից 2-ն առողջապահության նախարարությունն էր ուղարկել, եւ այն հանձնեցինք զորամասի բուժկետին՝ ծանոթանալով բուժկետի պետ, ավագ լեյտենանտ Լեւոն Յավրիյանի, դեղատան պետ, լեյտենանտ Հայկ Հովհաննիսյանի, ինչպես նաեւ՝ բուժկետում հաջողությամբ բուժվող տղաների հետ: 23-ից 8 արկղ առանձնացնելով դիրքայինների համար, մնացածը բաժանեցինք զորամասի ստորաբաժանումներին:

Ուզում եմ հատկապես ընդգծած լինել, թե ինչպիսի խոր տպավորություն թողեց մեզ վրա այցելությունը զորամասի դիրքերը: Մենք հպարտությամբ լցվեցինք պետական սահմանը պահող մեր տղաների համար: Խորապես տպավորվել ենք նաեւ սահմանը հսկելու եւ պաշտպանելու համար նախատեսված՝ ժամանակակից սարքերով զորամասի ապահովվածության աստիճանից… Շատ շնորհակալ ու կարեւոր գործ է կատարվել եւ այդ ամենը տեղադրող-«կարգաբերող» համապատասխան մասնագետների կողմից:

Մեզ հիացրեց տղաների բարձր տրամադրությունը: Հենց նրանց՝ մարտական հերթապահությունում գտնվողներին, ինչպես նաեւ՝ մարտական հերթապահության ավանում ընդհա-

նուր թվով 13 հոգու պարգեւատրեցինք պատվոգրերով ու շնորհակալագրերով: Ընդ որում՝ պարգեւատրվածների շարքում կային այնպիսիք, ովքեր մի քանի օրից հետո տուն պիտի վերադառնան, քանզի ավարտվում է նրանց պարտադիր զինծառայության ժամկետը, կային եւ այնպիսիները, ովքեր նոր են սկսել ծառայությունը, բայց արդեն իսկ ցուցաբերել են մարտական բարձր ոգի եւ զինվորական պարտականությունների գերազանց կատարում: Բոլորիս համար հետաքրքիր էին, այսպես ասած՝ ոտքի վրա տեղի ունեցած մեր զրույցները նրանց հետ: Այցը՝ այց, նվերը՝ նվեր, մշակութային ժամանցը՝ ժամանց, բայց ուզում եմ հավաստած լինել, որ զինվորների հետ մեր անկեղծ շփումները՝ զրույց ու ելույթների տեսքով համարում եմ մեր յուրաքանչյուր այցելության «մեխը»:

Նման շփման պահերին է, որ զինվորականի հոգին ներկայանում է քեզ՝ ինչպես բաց գիրք, եւ նման պահերին է, որ ինքդ էլ ձգտում ես նրա հետ անկեղծ ու ջերմ լինել այնպես, ինչպես դա կաներ նրա սեփական մայրը, հայրը, եղբայրը, քույրը, կինը /եթե կարգված է, եթե ոչ՝ սիրած աղջիկը/: Զգում ես, թե ինչով է «շնչում» բանակում ծառայող երիտասարդը. առանձին վերցված՝ ա՛յդ օրը, եւ ապա երկու տարվա բոլոր օրերին իր պարտականությունների հանդեպ լուրջ պատասխանատվությամբ, հարազատների նկատմամբ տածած ամենօրյա կարոտով, ապագայի նկատմամբ երազանքով…

Կարճ ասած՝ մեր խմբի յուրաքանչյուր անդամ վստահ համարում է, որ մեր այս հերթական այցը հարազատ բանակի հերթական զորամաս բավականին հաջողված էր , փոխօգտակար էր, եւ , համարձակվում եմ ասել, փոխարդյունավետ:

Ի դեպ, նույն կարծիքին է եւ զորամասի հրամանատարությունը…

Շարունակվող ծառայության անփորձանք ընթացք ձեզ, սիրելի սպաներ եւ զինվորներ:

ՆՎԵՐՆԵՐ՝ ՍՊԱՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Այն, որ այդ օրը Ստեփանակերտում տիրում էր բարձր տրամադրություն, եւ ամենուր տեղի էին ունենում միջոցառումներ, ավելի քան բնական էր, որովհետեւ Արցախի ժողովուրդը, Հայաստանի եւ Սիյուռքի հետ միասին, նշում էր Արցախով հանդերձ՝ Մայր հայրենիքի անվտանգության միակ երաշխավորի՝ Հայոց բանակի կազմավորման-կայացման Օրը՝ անցած 26 տարիների բանակաշինության ու բանակի արդիականացման գործում հասած խոշոր նվաճումների եւ, այսպես ասած, շարքային հաջողությունների համայնապատկերով...

Մեր հասարակական կազմակերպությունը՝ Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը, եւս անմասն չմնաց համաժողովրդական ոգեւորությունից՝ իր լուման ներդրեց տոնին...

Հունվարի 28-ին մենք, մասնավորապես, ԱԿԱՀՄ գրասենյակ հրավիրեցինք հանրապետության Պաշտպանության բանակի ռազմահայրենասիրական բաժնի, որի հետ արդեն տարիներ է, ինչ սերտ համագործակցում ենք «Սատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբի /որի ղեկավարը լինելու՝ պարտավորեցնող պատիվն ունեմ /գործունեության շրջանակում, սպաների, ինչպես նաեւ ՊԲ «Գոյամարտ» ծրագրի ու «Մարտիկ» թերթի լրագրողների՝ ընդհանուր թվով 34 երեխայի… եւ ուրախացրինք նրանց՝ անհատական նվերներ հանձնելով:

Նվերներից բաժին հատկացրինք նաեւ միջոցառմանը ներկա ՊԲ «Ասպետ» համույթից 8 հոգու:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Նույն օրը ԱԿԱՀՄ հարգարժան հյուրերն էին Պաշտպանության բանակը ներկայացնող մի մեծ խումբ սպաներ եւ այլ կարգի զինծառայողներ, բանակի հետ առնչված անձինք:

Փաստացի անկախ, բայց միջազգայնորեն դեռ չճանաչված հանրապետության խաղաղ կյանքն ապահովող, երկրի սահմանները պահպանող ու պաշտպանող բանակի ներկայացուցիչներին շնորհակալություն հայտնելով անհայտ կորած ազատամարտիկների ծնողների եւ մյուս հարազատների անունից, մենք նրանց պարգեւատրեցինք պատվոգրով, շնորհակալագրով, այլ պարգեւներով: Կարծում եմ, տեղին է, որ ընթերցողն իմանա պարգեւատրվածների անունները: ՊԲ ռազմահայրենասիրական բաժնի պետ, գնդապետ Վրեժ Իշխանյանին հանձնեցի ԱԿԱՀՄ պատվոգիր, նույն կազմակերպության «Հայրենիք եւ հավատ» մեդալ՝ անհայտ կորած ազատամարտիկ Գրիգորի Ալուխանյանի որդուն՝ ԱԿԱՀ գործունեությանն ակտիվորեն մասնակցող Մարատ Ալուխանյանին, Ազատամարտի մասնակից, 2-րդ կարգի հաշմանդամ, ադրբեջանական զնդանից ազատված Սանասար Խաչատրյանին, Պաշտպանության բանակից օրերս զորացրված Արգեն Խաչատրյանին:

«Գոյամարտ» ծրագրի օպերատոր Դավիթ Քեշիշյանն ու ՊԲ «Ասպետ» համույթի մենակատար Սարո Գեւորգյանը պարգեւատրվեցին շնորհակալագրով: ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀ ԶՈՒ 20-ամյակի հուշամեդալ փոխանցեցի 1992-1994թթ. պատերազմում անհայտ կորած ազատամարտիկի որդի՝ ՊԲ-ում ժամանակին զինվորական ծառայությունն օրինակելի իրականացրած, այժմ էլ ՍՀԲ կոչի Նախաձեռնող

խմբի կազմում ՊԲ զորամասեր կատարվող այցերի եւ դրանց ընթացքում մեր կողմից իրականացվող մշակութային միջոցառումների բազմակի մասնակից՝ երգիչ Արայիկ Սարգսյանին:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԻՎ 6 ԴՊՐՈՑՈՒՄ ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ

Ահնք էլ մեզ մոտ՝ մասնավորապես, անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանում, կազմակերպության գոյության 20 տարուն ընդամենը մի քանի ամիս չհերիքող ընթացքում, կարելի է ասել՝ անհաշիվ անգամներ նման դասեր ենք անցկացրել ուսանողության, աշակերտության եւ զինվորականության համար, բայց այս անգամ ինքս էի հրավիրված նման միջոցառման, որը հեղինակել էր մայրաքաղաքի թիվ 6 դպրոցի ղեկավարությունը: Այս դպրոցը, պիտի ասել, ընդհանրապես աչքի է ընկնում հայրենասիրական բովանդակությամբ բարձրորակ միջոցառումներ կազմակերպելու հմտությամբ: Այդ, ըստ իս, շատ պարտավորեցնող օրվան նվիրված Արիության դասն էլ մեզ՝ հրավիրված «հյուրերիս», քիչ է ասել՝ չհիասթափեցրեց:

Պատասխանատվություն պահանջող դասը վարում էր… այստեղ ուզենամ թե չուզենամ՝ պիտի թվարկեմ որոշ տեղեկություններ.1991-94թթ. պատերազմի մասնակից եւ 1995 թվականին էլ, ապա եւ 2005-ից մինչեւ 2015թ. բանակում ծառայած, ընդ որում՝ 2013-2015թ. ժամանակաընթացքում Պաշտպանության բանակի ԱՀՏԱ բաժնի հոգեբանական բաժանմունքի պետ եղած, այժմ՝ պահեստազորի մայոր Արթուր Ավետիսյանը:

Դասին ելույթներով հանդես եկան նույն դպրոցի նախկին տնօրեն Վիլեն Ղահրամանյանը, ձեր խոնարհ ծառան եւ հիշ-

յալ դպրոցին շեֆություն անող զորամասի սպա՝ կապիտան Հովիկ Բաբայանը, ում՝ օրվա անվանն ու նպատակին ավելի քան հարիր ու համապարփակ ելույթը, կարծում եմ, ավելորդ չէ ներկայացնել ստորեւ:

«Ավանդույթ է դարձել Պաշտպանության բանակի ներկայացուցիչների կողմից կրթական համալիրներում արիության դասերի անցկացման գործընթացը, որն ուղղված է բանակ-հասարակություն կապի ամրապնդմանը, ծանոթացմանը ՊԲ անցյալին ու ներկային, որում ներառված է նաեւ ապագա խնդիրները լուծելու համար ճիշտ որոշումներ կայացնելու գործը:

Այսօրվա մեր հերթական դասը նվիրված է ՀՀ Զինված ուժերի կազմավորման 26-րդ տարեդարձին: Հայտնի իրողություն է, որ յուրաքանչյուր երկրում, այդ թվում՝ եւ Հայաստանի ու Արցախի հանրապետություններում, ազգային անվտանգության համակարգում վճռական տեղ ունեն Զինված ուժերը, որոնք իրենց մեջ ներառում են շարունակական բանակաշինության, մարտական տեխնիկայի արդիականացման, կադրերի մարտունակության բարձրացմանը նպատակաուղղված գործողություններ:

Հայոց բանակի կազմավորումն անբաժանելիորեն կապված է հայոց պետականության ստեղծման պատմական իրողության հետ, քանզի պետություն եւ բանակ հասկացությունները փոխլրացնող են, եւ դժվար է մեկը պատկերացնել առանց մյուսի: Եվ պետության, եւ Ազգային բանակի ստեղծման սկիզբը եղավ 1988 թվականի փետրվարին, ու դրանում մեծ դեր խաղաց ԼՂՀ ինքնորոշման հարցը:

Հայոց բանակն իր կայացման ճանապարհին անցել է մի քանի դժվարին ու առանցքային փուլեր: Գնահատելով բանակի ստեղծման փառավոր հաղթանակների պատմությունը, այն

կարելի է որակել որպես մեր ժողովրդի մեծագույն նվաճում: Իսկ այդ նվաճումն ունեցել է 3 փուլ:

Փուլ առաջին. 1988-ի փետրվարից մինչեւ 1992-ի մայիս, երբ Արցախյան շարժման ակտիվացման ու հայ-ադրբեջանական հարաբերությունների սրման պայմաններում Հայաստանի եւ ԼՂՀ բնակչության անվտանգության ապահովումը դարձավ ավելի քան հրատապ:

Փուլ երկրորդ. 1992թ. հունիսից մինչեւ 1994թ. մայիս, երբ ՀՀ-ն եւ ԼՂՀ-ն գտնվում էին Ադրբեջանի կողմից չհայտարարված, բայց փաստացի սանձազերծած պատերազմում:

Փուլ երրորդ. 1994 թ. հունիսից առ այսօր: Եվ առավել հենց ա՛յս փուլը կարելի է անվանել ակտիվ բանակաշինության, զորքերի մարտունակության բարձրացման, միջին եւ բարձր սպայական կազմի պատրաստման, մարտական, ռազմական տեխնիկայի արդիականացման, ինչպես նաեւ բանակ-հասարակություն կապի ամրապնդման փուլ:

1990թ. ՀՀ փաստացի անկախությունը նոր հեռանկարներ բացեց բանակի ստեղծման գործում:1991 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության պետական կոմիտե: Նույն թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ նախագահի հրամանագրով առաջին Պաշտպանության նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը: 1990 թ. հունվարի 28-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «ՀՀ ՊՆ մասին» պատմական որոշումը՝ դրանով իսկ ազդարարելով Հայոց ազգային բանակի ստեղծման մասին:

Մեր Զինված ուժերն այսօր հանդիսանում են ռազմական անվտանգության հիմքը կազմող հզոր կառույց, որն ապահովում է երկրի անկախության, տարածքային ամբողջականության, պետական սահմանների անձեռնմխելիության զինված

պաշտպանությունը: Եվ, ընդսմին, Զինված ուժերը ներքաղաքական հարցերում չեզոքություն են պահպանում:

Զինված ուժերը ներկայումս բաղկացած են ղեկավարման կենտրոնական մարմնից՝ Պաշտպանության նախարարություն ու գլխավոր շտաբ, այնուհետեւ՝ զորամիավորումներից, միավորումներից, զորատեսակներից եւ կենտրոնական ենթակայության զորամասերից, իսկ պատերազմական պայմաններում՝ նաեւ այլ զորքերից: «Այլ զորքեր» ասելով նկատի են առնվում ոստիկանության զորքերը, Ազգային անվտանգության ծառայության հատուկ ստորաբաժանումները, սահմանապահ զորքերն ու արտակարգ իրավիճակների նախարարության որոշակի ստորաբաժանումները: Զինված ուժերի ընդհանուր անձնակազմը բաղկացած է գործող անձնակազմից ու պահեստազորից:

ՀՀ ԶՈՒ-ն իր 26-ամյա գործունեության ընթացքում զգալի առաջընթաց է ապրել, որն ուղեկցվել է բոլոր զորատեսակների եւ ղեկավարման օղակների զարգացմամբ ու սուղ մասնագիտությունների կատարելագործմամբ, ինչպես նաեւ՝ Ս եւ ՌՏ-ի զգալի արդիականացմամբ:

Ազգային բանակի դերակատարությունը չի սպառվում միայն զուտ պաշտպանական-ռազմական բնույթի գործառույթներով: Այն ունի եւս մի կարեւոր առաքելություն: Դա ազգային ինքնագիտակցության ամրապնդման եւ ազգի ոգեղեն համախմբվածության ապահովումն է: Քանզի հզոր բանակի առկայությունը յուրաքանչյուր անհատի հոգում սերմանում է ապահովության ու պաշտպանվածության զգացում, որն անհրաժեշտ է ինչպես իր՝ անհատի, այնպես էլ ողջ հասարակության առողջ հոգեկան կյանքի ու գործունեության ապահովման տեսանկյունից:

Ապահովության զգացողությունը բարենպաստ պայմաններ է ստեղծում ազգի զարգացման, հոգեւոր ու մշակութային

կյանքի խթանման համար: Քանզի իրեն անպաշտպան եւ անապահով զգացող մարդն ի զորու չէ ստեղծագործելու եւ արարելու, ուստի եւ որքան համախմբված է լինում ազգը, նույնքան ավելի մեծ է լինում նրա դիմադրողականությունն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին բացասական ազդեցությունների նկատմամբ: Ավելին. այս բոլորը կարելի է վերագրել մի պարզ, ու միաժամանակ՝ խորիմաստ, բանաձեւի. «Հզոր բանակի գոյությունը հասարակության հոգեկան առողջ գոյության գրավականն է»:

Մեր զորամասի հրամանատարության անունից եւ անձամբ իմ կողմից ուզում եմ մեկ անգամ եւս շնորհավորել բոլորիս՝ Ազգային բանակի կազմավորման 26-րդ տարեդարձի առթիվ ու ցանկալ խաղաղ եւ արգասաբեր ապագա»:

«ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆ» ՀԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ

Այդ օրը մարդաշատ էր մայրաքաղաքի Մշակույթի ու Երիտասարդության պալատի «ցուցահանդեսների սրահը»: Ստեփանակերտցի հանդիսատեսի մասին ընդհանրապես միշտ էլ բարձր կարծիքի են եղել Արցախ այցելողներն, ու ես վստահ եմ, որ սույն ցուցահանդեսին ներկա գտնվելու պարագայում նույնպես նրանք կմնային նույն կարծիքին…

Այն իր տեսակի մեջ ուրույն էր. սրահում ներկայացված էին Պաշտպանության բանակի սպաների…կանանց ու երեխաների ձեռակերտ ու ձեռագործ աշխատանքների հետաքրքիր նմուշներ:

Որպես Արցախի Հանրապետությունում գործող հասարակական կազմակերպություններից մեկի ղեկավար՝ ինձ էլ ելույթի հրավիրեցին՝ ու շնորհավորելով ցուցահանդեսում մրցանակներ ստացածներին, մեր Միության անունից նվերներ հանձնեցի 8 հոգու:

Ասվածին ի լրացումն ասեմ, որ ինքս էլ ցուցահանդեսի կազմակերպիչների կողմից շատ հաճելի եւ ինձ համար թանկարժեք նվեր ստացա. Արցախի գրողների միության նահապետներից մեկի՝ տաղանդավոր արձակագիր Մաքսիմ Հովհաննիսյանի «Հեռացող երկրի կարոտը» գիրքը:

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐԸ՝
ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԵՏ

Առաջին հայացքից թվում է, թե Ապրիլյան քառօրյա պատերազմը մի տեսակ խունացրել թե երկրորդ պլան է մղել 1992-94թթ. արցախյան Ազատամարտի հուշն ու եւպատերազմյա խնդիրների /անելիքի/ սրությունը, բայց իրականում այդպես չէ:

Դավադիր նոր պատերազմն ու նրա կարճ տեւելուն չնայած բավականին զգալի մեր կորուստները խորը մտածելու տեղիք տվեցին բոլորիս: Եվ ամենից առաջ՝ մտածել այն հրամայականի ուղղությամբ, որ թշնամուն թերագնահատել չի կարելի, ուստի եւ ոչ միայն օրվա գործը վաղվան թողնել չի կարելի, այլեւ վաղվա՞ գործն անել է անհրաժեշտ այսո՛ր…Կարճ ասած՝ անելիքը կա, եւ դա մեզ պարտավորեցնում է ժամանակի՛ն անել: Ընդ որում՝ եւ մեծ գործը, եւ «մանրուք» թվացողը, որ իրականում այդպիսին չէ: Օրինակ, իմ պարագայում՝ թեկուզ հենց պատշաճ ուշադրությամբ վերաբերվելը պատերազմում անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքներին, հարազատներին, հնարավորինս ընդառաջել-աջակցելը նրանց առավել հուզող խնդիրների լուծմանը: Այսինքն՝ այն, ինչ մեր կազմակերպությունն արել եւ անում է արդեն քսան տարի… Բայց միայն մենք չէ, որ պարտավոր ենք անել դա. Հանուն դրա պիտի ջանան եւ մեր պետական հիմնարկությունները, բարեգործները եւ այլ օղակներ:

Եկեք ճշմարտության աչքերին ուղիղ նայենք. վաղը, մյուս օրը մեր այդ ուշադրությունն ու օգնությունը կարող են պետք չգալ պատերազմից տուժած ընտանիքների …ավագ սերնդին,

ավելի կոնկրետ՝ անհայտ կորածների հայրերին ու մայրերին, որոնցից շատերն արդեն իսկ հրաժեշտ են տվել այս երկրյա կյանքին՝ աչքները զինվոր զավակների վերադարձին: Իսկ նրանք, ովքեր կենդանի են, չեն կորցնում նրանց վերստին տեսնելու հույսը՝ որքան էլ դա քիչ հավանական թվա…

Այսքանն ասացի՝ ընդգծելու համար, որ երբ խոսում ենք անհայտ կորած ազատամարտիկի մոր կամ այլ հարազատի մասին, հստակ պատկերացնենք, թե համարյա երեք տասնամյակ հոգեբանական ու նաեւ շատ առումներով ի՛նչ վիճակում են գտնվում այդ մարդիկ, ում հետ գործ ունենք… Կոնկրետ ես գերազա՛նց գիտեմ, որովհետեւ նրանցից մեկն եմ:

Բայց ես նաեւ նրանց միության՛ ղեկավարն եմ, ու հենց դրա համար էլ…ամեն օր ասելը հիմարություն կլինի, սակայն իրենց համար հույժ անհրաժեշտ պարագաներում ջանում եմ լինել իրենց կողքին եւ օգնել՝ ինչով հնարավոր է լինում: Պատերազմից, ըստ իս, վատթարագույն ձեւով տուժած այդ ընտանիքներին ձգտում եմ այցելել բոլոր տոն օրերին՝ թեկուզ մի հուսադրող խոսքով մխիթարելու, համբերություն մաղթելու համար նրանց, եւ, ինչու չէ՝ եթե հնարավոր է լինում՝ ոչ նյութական օգնություն տրամադրելու, եթե ոչ՝ գոնե մի համեստ նվերով շնորհավորելու համաժողովրդական տոնի իրենց բաժինը… Որովհետեւ որքան էլ կսմթված ու ցավելիս լինի նրանց սիրտը, այն չի կոշտանում հայրենիքի հանդեպ, քանզի իրենց զավակները գիտակցելով են կռվել նույն հայրենիքի ազատության համար:

Ահա նման առաքելությամբ էր, որ օրերս մեկնեցի Մարտակերտի շրջան: Ավելի կոնկրետ՝ Հայոց բանակի ստեղծման 26-րդ տարեդարձի առնչությամբ անհայտ կորած ազատամարտիկների՝ պատերազմից տուժած մի քանի ընտանիքներում լինելու համար:

Անկեղծ ասեմ, որ առաջինը հարկ համարեցի այցելել Հայկաջուր գյուղում ապրող Համլետ Բաղալյանի ընտանիքին, եւ ահա թե ինչու: Այսօր դեռ երկրորդ երիտասարդության շեմին չհասած ամուսնական այդ զույգի՝ Համլետի ու Հերմինեի հարկի տակ /ընդ որում՝ շատ գեղեցիկ հարկի, որովհետեւ Արցախի կառավարությունը նրանց հիմնովին նորակառույց տուն է պարգեւել, բարո՛վ վայելեն/ 8 երեխա է մեծանում: Ինձ այնպես թվաց, թե անգամ դեմ չեն, որ այդ թիվն աճի: Մեկը-մյուսից սիրուն տղեկներ ու աղջնակներ են՝ երկրի ապագա զինվորներ ու մայրեր: Նրանց բոլորին նվերներ հանձնեցի: Տեսնեի՞ք՝ ինչպես ուրախացան…

Համլետի ավագ եղբայր, ազատամարտիկ Աբգարը լեգենդար «Արաբո» ջոկատի կազմում անհայտ կորել է Հասանղայայի մոտ. դաժանագույն մարտում ջոկատն ընկել էր ծուղակի մեջ (1992թ-ի հունիսի 29-ին):

Հաջորդն այցելեցի Մարտակերտում բնակվող Սվետլանա Կարապետյանին, ում միանգամից երկու որդիներն են անհայտ կորել նույն «Արաբո»-ի կազմում՝ Արմենն ու Կամոն: Երբ տղաների հայրը՝ Ժորան դեռ կար, քաշում էր ընտանիքի լուծը. հոգում-խնամում էր ահավոր վշտից ու հիվանդությունից սայլակին գամված կնոջ մասին, ով 1-ին կարգի հաշմանդամ է, կաթվածահար՝ զույգ ոտքերով:

Ժողովրդական խոսքն ասում է, թե կարկուտը ծեծած տեղն է ծեծում… Կարապետյան ընտանիքի տղա-թոռ Էրիկն էլ հանուն հայրենյաց նույն՝ 1-ին կարգի, հաշմանդամ է դարձել Ապրիլյան պատերազմում… Նրա դստրիկը եւս շատ ուրախացավ «Վերա տատիկի» բերած նվերով:

Ժենյա Մնացականյանի հանդեպ իմ հարգանքը խորն է: Այդ կինը, որ 1992-94թթ. պատերազմում նույնպես միանգամից երկու որդուն է կորցրել անհայտության մեջ՝ Արտակին ու

Սպարտակին, ինձ միշտ հիացրել է իր ազնվենի պահվածքով, կյանքի իրողությունների հետ սթափ հաշվի նստելու կարողությամբ ու հավատով, որ մեր հայրենիքը կկարողանա՞ հաղթահարել դժվարությունները, կդիմանա ժամանակի մարտահրավերներին, քանզի ունենք բանակ: Մեր անկեղծ զրույցի ժամանակ ինձ շատ դուր եկավ նրա մի նկատումը, որ արտահայտեց, ըստ իս, շատ նրբորեն. «Կդիմանանք, Վերա ջան, չդիմանանք՝ ի՞նչ պիտի անենք…Ամեն ինչի էլ կդիմանա ժողովուրդը, միայն թե իշխանությունները ժամանակին կարողանան շտկել արդարության ոչ հազվադեպ ծռվող նժարը…Անարդարությունը չպետք է գերիշխի մեր կյանքում»:

Այդ հավատ-ցանկությամբ մեկ օրում եղա նաեւ Նոր Մարաղայում ու Ներքին Հոռաթաղում՝ ընդհանուր թվով այցելելով անհայտ կորած ազատամարտիկների 10 ընտանիքի:

Գոտեպնդվեցեք, սիրելիներս, հույսը մեռնում է վերջինը… Եկեք մեր հոգու քվեն տանք միայն կյանքին, միայն ապրելուն՝ հանուն մեր զավակների: Ո՞վ գիտի, մեկ էլ տեսար…նրանց մեզ վերադարձնելու մի հրաշք տեղի ունեցավ:

ՆԱԽ՝ ՀԱՅԵՆԻՔԻՆ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ, ՀԵՏՈ՝ ՄՆԱՑԱԾԸ

Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարանի, կարելի է ասել, ավանդույթներից մեկն էլ դարձել է արիության դասերի անցկացումը տարբեր լսարանների՝ աշակերտների, ուսանողների, զինվորների համար... Եվ տոնական օրերին, կամ դրանց նախօրյակին, եւ սովորական խմբային այցելությունների ժամանակ՝ հանպատրաստից...

Նմանատիպ ամենաթարմ միջոցառումը, որ տեղի ունեցավ այստեղ, փետրվարի 9-ին էր՝ Արցախը մայր Հայաստանի հետ վերամիավորելու խնդրանք-պահանջով 1988թ. փետրվարի 20-ին ընդունված պատմական ՈՐՈՇՄԱՆ 30-ամյակի շրջանակում:

Այս անգամ լսարանը լիովին կազմում էին ժամկետային ծառայության զինվորները՝ Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի 7-րդ պաշտպանական շրջանից: Նրանք՝ երկրորդ գումարտակի վեցերորդ վաշտի՝ թվով 21 նորակոչիկներ, իրենց սերժանտի եւ ավագի հետ միասին ծանոթացան թանգարանի ցուցանմուշներին, ապա տեղի ունեցավ դաս-զրույց հայրենիքի պաշտպանության գործի երկու գլխավոր գումարելիների՝ զինվորականից պահանջվող արիության եւ հրամանատարի հրամանի արագ ու ճիշտ ընկալման եւ նրա անշեղորեն կատարման շուրջ:

Ասեմ, որ նույն օրը մինչ այդ էլ թանգարան էր այցելել ութ աշակերտից բաղկացած մի խումբ՝ մայրաքաղաքի թիվ 1 դպրոցից, եւ յուրատեսակ էստաֆետ ստացվեց դպրոցը երեկ ավարտածների ու դեռ չավարտածների միջեւ:

Երկու խմբի հետ հանդիպումից ստացած իմ տպավորությունը կարելի է ձեւակերպել այսպես. հիանալի սերունդ է աճում հայկական երկու հանրապետություններում, ազգի առջեւ ծա-

ռացած թիվ 1 հիմնախնդրի՝ հայրենապահության անհրաժեշտությունը հասկացող սերունդ:

Զրույցի ընթացքում պարզվեց, որ զինվորների թվում կան եւ նորակոչիկային տարիքից բարձր տղաներ էլ՝ ծառայելու եկած եւ Հայաստանից, եւ մերձակա արտասահմանից …Ինչն, ի վերջո, փաստում եւ հաստատում է բանակին վերաբերող ռեֆորմների պահանջվածությունը: Ավելորդ չեմ համարում քսաներեքից գոնե յոթի մասին հակիճ պատմել ընթերցողին՝ նախապես ասելով, որ քսաներեքի մեջ էլ ես տեսա հոգեպես ամուր եւ հայրենիքին նվիրված երիտասարդների:

Սկսեմ սերժանտ Արտյոմ Այվազյանից: Ընտանիքը /հայր, մայր, երկու քույր ու մեկ եղբայր՝ Արտյոմն ինքը/ ապրում էր Դոնեցկում: Մի օր էլ վճռեցին վերադառնալ Հայաստան ու վերադարձա՛ն: Շուտով Արտյոմը զորակոչվեց բանակ: Մեկ ամսվա նորակոչիկ՝ ծառայում էր Արցախում, երբ սկսվեց Ապրիլյան պատերազմը…Եղել է դիրքերում, իր նման շատերի հետ ու պես ճաշակել թշնամուն հետ մղելու ե՛ւ դժվարությունը , ե՛ւ նրան հաղթելու ոգեւորությունը…Հիմա էլ է դիրքերում, միակ տարբերությունն այն է, որ արդեն որպես հմուտ ու գիտակ զորական՝ ավագ է կարգված նորակոչիկների վրա: Ես նրան հարցրի.

-Ինչպիսի՞ն ես տեսնում քո ապագան…

Ու լսեցի այս պատասխանը.

-Ծառայությունս ավարտեմ թե չէ՝ մնալում եմ բանակում, որպես կադրային զինվորական: Բանակից բացի ինձ ուրիշ տեղ չեմ տեսնում: Դա է վճիռս:

Մնջոյան Խաչիկն արդեն կողմնորոշված է եկել բանակ: Նա՝ դեռ մեկ ամսվա նորակոչիկը, սովորում էր Հայաստանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: Երբ ավարտի ծառայությունը /բարով-խերով/, վերադառնալու է ուսմանը, որպեսզի լրացնի երկրին շատ անհրաժեշտ երիտասարդ ու համարձակ դիվանագետների շարքը:

Ռաֆայել Հակոբյանն իր զինվորական «մեկնարկն» սկսել է 13 տարեկանում՝ ռազմական վարժարանից: Հետո ավարտել է

Պենզայի /ՌԴ/ ռազմական ակադեմիան եւ Արցախ՝ ծառայելու /կռվելու/ եկել Ապրիլյան պատերազմի օրերին… Հետո մեկ տարի բարձրագույն զինվորական ուսումը «հայկականացրել-թարմացրել» է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում՝ այն ավարտելուց անմիջապես հետո հինգ տարվա զինծառայության պայմանագիր կնքելով…

Արգիշտի Ստեփանյանը բանակ է զորակոչվել պետհամալսարանի երկրորդ կուրսից, ուսանում էր հանրային կառավարման բաժնում, քսաներեքերորդ օրն է, ինչ ծառայում է, եւ տրամադրությունը միանգամայն նորմալ է, ասում է երկու տարին ինչ է, հայրենիքի հանդեպ պարտքս կկատարեմ ու պարզերս վերադառնամ մասնագիտությանս:

Իսկ այ Կարեն Աբրահամյանը, որ եկել է… Կրասնոյարսկից /որտեղ, ի դեպ, մեխանիզացիայի տեխնիկում է ավարտել/, դեռ երազում է բուհ ընդունվելու մասին: Բայց, ասում է, ժամկետային ծառայությունս ավարտեմ՝ նոր:

Վահե Մարգարյանը Հայաստանի պոլիտեխնիկական համալսարանի ուսանող է, ձգտում է ծառայությունը կատարել օրինակելիորեն: Նա գտնում է, որ ցանկացած հաղթանակի հիմքը մարդու համար հստակ նպատակ ընտրելն է եւ նրա իրականացման համար կամքի ուժ կուտակելը:

Չեմ կարող ասել, թե որքան հաճելի էր, երբ տղաներից Արթուր Համբարձումյանը հանկարծ աշակերտի նման բարձրացրեց ձեռքն ու ասաց՝ այստեղ կարելի՞ է երգել…Եվ իմ «իհա՜րկե»-ն լսելով, հզոր ու հաճելի ձայնով մեկը-մյուսի հետեւից երգեց հայրենասիրական բովանդակությամբ երգեր: Երգեց այնպես, որ ինձ մի պահ թվաց, թե նրան «ունկնդրեցին» եւ լուսանկարներից դահլիճում տեղի ունեցողին լուռ «հետեւող» մեր անհայտ կորած ազատամարտիկները…

Իրո՛ք, հրաշալի սերունդ է մեր երիտասարդ սերունդը, ում ուսերին է հայրենյաց սահմանների պաշտպանության գործը:

ԱՅՑ՝ ԶՈՐԱՄԱՍ, ՈՐԻ ԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՆ Է

Եվ, իհարկե՝ մարտական պատրաստության մակարդակի անշեղ բարձրացումը…

«Սարարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խումբը ս.թ. փետրվարի 16-ին եղավ ԱՀ ՊԲ Հարավ-արեւելյան ուղղության թիվ Ն. զորամասում: Այցը նվիրված էր Արցախյան շարժման 30-ամյակին:

Այդ մասին է պատմում ստորեւ ներկայացվող ռեպորտաժը:

Խմբի կազմը, մշտական անդամներ Արմեն Հովսեփյանից, Արթուր Գրիգորյանից եւ ինձնից բացի, այս անգամ ներկայացնում էին եւ Լաուրա Նասիբյանը՝ Զոհված ազատամարտիկների հարազատների միությունից, ԱՀ մշակույթի նախարարության կրոնի եւ ազգային փոքրամասնությունների բաժնի վարիչ Աշոտ Սարգսյանը, Ստեփանակերտի թիվ 10 դպրոցի փոխտնօրեն Անահիտ Սարգսյանն ու դպրոցի զինղեկ Վարուժան Աղաջանյանը, թիվ 6 դպրոցի զինղեկ Արմեն Մարտիրոսյանը, ԱՀ ՊԲ ռազմահայրենասիրական բաժնի սպա՝ մայոր Դավիթ Օհանջանյանը, ՊԲ «Գոյամարտ» ծրագրի հեռուստաօպերատոր Դավիթ Քեշիշյանը:

Ընդունված կարգի համաձայն, մեր հանդիպումը զորամասում տեղի ունեցավ նախ հրամանատարության հետ: Օրվա ծրագրին ծանոթացրինք հրամանատար, գնդապետ Արամ Չիլինգարյանին, նրա ԱՀՏԱ գծով տեղակալ, փոխգնդապետ Արմեն Պետրոսյանին եւ շտաբի պետ, փոխգնդապետ Արամ Խաչատրյանին: Զրուցեցինք նաեւ հրամկազմը ներկայացնող մյուս սպաների հետ:

…Ահա եւ հատկապե՛ս սպասված պահը՝ հանդիպումը զինվորական ընդհանուր կոնտինգենտի հետ, ինչին տալիս ենք

հատուկ նշանակություն: Երբ զինվորների առջեւ ելույթ են ունենում օրվա հյուրերը, բոլորի խոսքի մեջ շեշտը միշտ էլ դրվում է հայրենասիրության եւ հայրենապահության, տվյալ դեպքում՝ սահմանապահության կարեւոր խնդրի վրա, եւ հնչում են հոգեկան արիության ու ծնողական պատգամներ, հորդոր՝ բանակային կանոնադրությանն ու կարգապահությանը սրբորեն հետեւելու կոչով եւ այլն:

Բայց այս անգամ հանդիպմանը մի նոր երանգ ավելացրեց Աշոտ Սարգսյանի ներկայությունն ու խոսքը: Եվ, պատկերացրեք, նրան շատ ուշադիր էին լսում ոչ միայն «տանտերերը», այլեւ մենք՝ «հյուրերս», որովհետեւ միշտ չէ, որ կարող ես լսելու հնարավորություն ունենալ, ասենք, Արցախում հավատացյալներին վերաբերող տեղեկությունների՝ թվերի ու փաստերի, կամ՝ աղանդավորության տարածման դեմ եթե ոչ ակտիվ պայքարի /լավ է, թե վատ՝ գոյություն ունի խղճի ազատություն/, ապա գոնե նրա սահմանափակման անհրաժեշտության մասին: Որովհետեւ, ասենք առանց մանրամասնելու, աղանդավորությունն իր մեջ վտանգ է պարունակում առաջին հերթին փոքր երկրների համար…Օրինակներ շատ կան, որոնք ցույց են տալիս, որ այն երկիրը թուլացնող եւ անգամ կազմաքանդող /ինչից մեզ հեռու պահի Աստված/ յուրահատուկ միջոց է:

Պակաս նշանակություն չունի եւ մեր այցերի մյուս կարեւոր կողմը. այն, որ զինվորականները պետք է զգան, որ ժողովուրդը կանգնած է իրենց թիկունքին: Դրա լավագույն հնարավորությունը նրանց տալիս է մեր խմբի գործունեությունը, որովհետեւ ամեն անգամ այցերին ընդգրկում ենք հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների…

Այդ օրը մեզ հետ էր եւ Շ.Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի «Արցախի բալիկներ» համույթը, որի կատարողնե-

րի ուժերով կազմակերպված համերգը շատ դուր եկավ զինվորական հանդիսատեսին:

Ինչպես ամենուր՝ այստեղ էլ մշակութային ծրագրի ընթացքին առանձնահատուկ աշխուժություն հաղորդեցին պարերը, որին մասնակցեցին բոլորը՝ ե՛ւ հյուրերը, ե՛ւ հյուրընկալողները…Նման միջոցառումները շատ են նպաստում ժամանակակից բանակին բնորոշ զինվորական բարդ ու դժվար ծառայությունում տղաներին ներքին լարվածությունից մասամբ լիցքաթափելուն…

Խմբի ճանապարհվելու նախօրյակին Ստեփանակերտի թիվ 6 դպրոցի տնօրեն Արթուր Ավետիսյանը մեզ էր հանձնել իրենց առաջին դասարանցի Սեւակ Խաչատրյանի նամակը: Իր իսկ՝ երեխայի խնդրանքով զորամաս տանելու համար, որովհետեւ տղեկի հայրը ծառայում է հենց նույն զորամասում…

Եվ ահա բարձրաձայն հնչում են նամակի հուզիչ, կասեի անգամ՝ ցնցող, տողերը, ու հարյուրավոր ձեռքեր ծափերով են ընդունում փոքրիկի բառերը: Երեխան գրել էր, որ կարոտում է հորը, բայց քանի որ գիտի, որ նա զինվորներին սովորեցնում է պաշտպանել սահմանը, դրա համար էլ սիրելի հայրիկի «երկու այտը» համբուրում է… հեռակա եւ խոստանում, որ միշտ լավ կսովորի: Մենք էլ էինք հուզվել, բայց տեսնելու՞ բան էր նամակի հասցեատիրո՛ջ տվայտանքը…

Երբ ծանոթացանք՝ եւ զրուցում էի զինվորների հետ, իմացա, որ մի շատ լավ տղա՝ Արգեն Խաչատրյանը, ում հետ վերստին հանդիպելու ցանկությունն ունեի: Դեռ հունվարին նրան մեզ մոտ, ԱԿԱՀՄ հուշաթանգարանում, պարգեւատրել ու նվեր էի հանձնել գերազանց ծառայելու համար… ժամանակին այնպես է ստացվել, որ տղան, համարյա նորակոչիկ, մասնակցել է Ապրիլյան պատերազմին եւ իրեն դրսեւորել որպես արիասիրտ զինվոր: Եվ ահա Արգենի զինակիցներն

ասացին, որ ավարտվել է նրա ժամկետային ծառայության ժամանակն, ու նա վերադարձել է տուն: Այդ պահին ինքս ինձ մտովի ասացի՝ տա Աստված, որ մեր բանակի բոլոր զինվորներից յուրաքանչյուրն այդպես հաջողությամբ ու պատվով ավարտի զինվորական ծառայությունը եւ ողջ ու առողջ վերադանա հարազատների գիրկը:

Զորամասում մեր «աչքի համար» երկու հաճելի անակնկալ գտանք: Նկատի ունեմ նախ նոր ու ժամանակակից ակումբը, որով պարզապես հիանալ կարելի է: Այն, իրոք, աչք է շոյում բոլոր առումներով: Երկրորդ գնահատելի երեւույթն էլ այն էր, որ նույնպես գեղեցիկ ու հարմարվետ բուժկետում, ինչպես պարզեցինք, բուժում ստացող զինվորականների թիվն…ընդամենը 3 էր: Ասել է թե՝ զորամասում մյուս բոլորը ֆիզիկապես առողջ են, եւ դա լավ «ցուցանիշ» է:

Զորամասի տարածքում երկու խաչքար կա, մեկը՝ փոքր ու վնասվածքներով /Ապրիլյան պատերազմի օրերին քարն էլ է տուժել թշնամու լկտի գործողությունից/, իսկ մյուսն՝ անհամեմատ մեծ , անվնաս ու շքեղ: Իմացանք, որ երկուսն էլ պատվիրել ու տեղադրել է տվել գեներալ-լեյտենանտ /փոքր խաչքարի ժամանակ՝ դեռ գնդապետ / Մանվել Գրիգորյանը:

Իսկ զինվորական ճաշարա՞նը: Այնտեղ ոտք դնելուց ակամայից նայում ենք մեր կոշիկներին՝ համոզվելու որքանով են մաքուր…Ահա եւ երրորդ՝ լրացուցիչ անակնկալը. զինվորական ճաշարանում ներդրված է ճաշելու նոր տեխնոլոգիա՝ ինքնասպասարկում, որ համարյա, այսպես կոչված, «շվեդական սեղան» է հիշեցնում: Մեզ բացատրում են, որ բանակի հրամանատարության կողմից խնդիր է դրված աստիճանաբար նման սպասարկման անցնել… բոլոր զորամասերում: Պատկերացնու՞մ եք, թե ինչպիսի առաջընթաց է լինելու դա: Մեր ծնողներն, այո, պետք է իմանան, որ բանակում արվում է

ամեն ինչ՝ իրենց զավակների առողջության ու կյանքի ապահովման համար:

Վերջում ասեմ, որ մեզ հետ զորամաս էինք տարել 33 արկղ նվերներ, որոնց մի մասի ձեռքբերմանն աջակցել էին թիվ 10, թիվ 5 եւ թիվ 6 դպրոցների ներկայացուցիչները, մյուս մասն էլ ապահովել էինք ինքներս՝ մեր խմբի մշտական անդամները: Դրանք բաժանվեցին ստորաբաժանումներին: Եղան նաեւ պարգեւատրումներ: Մասնավորապես, մեր կազմակերպության մեդալով պարգեւատրվեց զորամասի հրամանատարը, պատվոգրով ու գրքով՝ նրա ԱՀՏԱ գծով տեղակալը, շնորհակալագրով՝ ծառայությունում աչքի ընկած 5 զինվորներ: ՁԱՀՄ պատվոգիր էլ ստացան 2 եւ շնորհակալագիր՝ 3 զինծառայողներ:

Ստեփանակերտ վերադարձանք հարուստ տպավորություններով:

ՓՈԽՀԱՐՍՏԱՑՈՒՄ ՄԻՄՅԱՆՑՈՎ

«Սայրարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խումբը 2018թ. ապրիլի 23-ին եղավ ԱՀ ՊԲ 18-րդ դիվիզիայում՝ զինվորականներին մատուցելով իսկական անակնկալ... Բացատրեմ. ինչնից, Զոհված ազատամարտիկների հարազատների միության ներկայացուցիչ Լաուրա Նասիբյանից, խմբի մշտական անդամ՝ Շ.ազնավուրի անվան մշակութային կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանից, ՊԲ սպա՝ կապիտան Նունե Աբաղյանից, ՊԲ «Գոյամարտ» ծրագրի հեռուստաօպերատոր Դավիթ Քեշիշյանից ու «Մարտիկ» թերթի լրագրող Դավիթ Հարությունյանից բացի, այդ օրը խմբին Հայաստանից եկել-միացել էր հանրահայտ երգչուհի Սիլվա Հակոբյանն՝ ընտանիքով: Զորամասում բոլորիս ընդունեցին թնդացող ծափերով: Բայց ամեն ինչի մասին՝ հերթով...

Տեղում խմբին դիմավորեց դիվիզիայի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ, գնդապետ Մանուկ Բաղալյանը՝ հրամկազմի անդամների հետ միասին: Հանդիպումն սկսվեց այցի նպատակին ու ծրագրին նրանց ծանոթացնելուց:

Այնուհետեւ տեղի ունեցան զրույցներ, ելույթներ զինվորական ընդհանուր կոնտինգենտի առջեւ: Մենք դրան տալիս ենք առանձնահատուկ նշանակություն, որովհետեւ հնչող խոսքում շեշտը դրվում է հայրենասիրության ու հայրենապահության, ավելի կոնկրետ՝ սահմանն աչալրջորեն ամուր պահելու խնդիրների վրա:

Ինչպես միշտ՝ այս անգամ էլ հնչեցին արիության կոչեր, ծնողական պատգամներ ու հորդոր՝ բանակային կանոնադրությանն ու կարգապահությանը սրբորեն հետեւելու մասին: Ընդհանրապես մեր բոլոր այցերն էլ միտված են լինում մեկ

հիմնական նպատակի, եւ դա այն է, որ մեր զինվորականներն զգան, որ հարազատ երկիրն ու ժողովուրդը կանգնած են իրենց թիկունքին:

Հետաքրքիր ընթացավ մեկուկես ժամանոց մշակութային միջոցառումը: Խմբի հրավիրած չորս երգիչների վոկալ կատարումներն ուրախ ու հաճելի տրամադրությամբ պարուրեցին զինվորներին: Կարելի է ասել, որ նրանց հրճվանքի բարձրակետը դարձան Սիլվա Հակոբյանի աննման կատարումները: Հապա շրջան կազմած՝ ինչպիսի՜ թափով էին պարում զինվոր տղաները…

Ես դիվիզիայի հրամանատարին պարգեւատրեցի մեր կազմակերպության՝ ԱԿԱՀՄ պատվոգրով, 10 ակտիվ զինծառայողներին էլ՝ շնորհակալագրով: Հինգ շնորհակալագիր էլ զինվորներն ստացան ԶԱՀՄ ներկայացուցչի կողմից:

Տասնչորս արկղ նվերներ էինք տարել, դրանք բաժանվեցին ըստ գումարտակների:

Այնուհետեւ ականատեսը դարձանք մի հուզիչ տեսարանի. ես մայր Հայաստանից եկած Սիլվա Հակոբյանին հանձնեցի ԱԿԱՀՄ «Հայրենիք եւ հավատ» մեդալ, գնդապետ Մանուկ Բաղալյանն էլ զորամասի անունից պատվոգրեր հանձնեց հանրածանոթ երգչուհուն եւ «Սատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբին…

Եվ մեր խումբը, եւ զինվորական կոնտինգենտն այդ օրը հիացան դիվիրամի տեղակալ Մանուկ Բաղալյանի պահվածքից, վերաբերմունքից, ինչու չէ՝ նաեւ շնորհքից: Նկատեցինք, թե ոչ միայն հրամանատար սպայի, այլեւ ավագ ընկերոջ ինչպիսի՜ ջերմ հայացքով էր նա հետեւում «պարահարթակում» զինվորների, այսպես ասած, բացվելուն, նույնիսկ պահ եղավ, երբ նա միացավ պարողների ստվար խմբին…Մեզ, իրոք, շատ դուր եկավ սովորաբար խիստ ու պահանջկոտ բարձրաստիճան

սպային հարիր մատչելի վերաբերմունքը, ինչն, ի դեպ, բոլորովին չի անդրադառնում ենթակաների կողմից իրենց պարտականություններն ըստ պահանջվածին կատարելու վրա…

Ասեմ, որ այդպիսի միջոցառումները, եւ հատկապես նկարագրածս վերջին պատկերը, հաստատ նպաստում են ժամանակակից բանակին բնորոշ զինվորական դժվար ու պատասխանատու ծառայությունում տղաներին ներքին լարվածությունից փոքր-ինչ լիցքաթափելուն…

ՖԻԶԻԿԱՊԵՍ ՈՒ ՀՈԳԵՊԵՍ ԶԻԳ ԵՎ ԱՄՈՒՐ ՏՂԱՆԵՐԻ ՄՈՏ

Այլ կերպ չէր էլ կարող լինել, չէ՞ որ խոսքը վերաբերում է Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակում ծառայող տղաներին: Բանակ, որն իր կազմավորման օրից մշտապես գտնվում է եթե ոչ պատերազմական՝ ապա ամեն դեպքում ևեռգության ու պայմանախախտության մեջ գրեթե աննախադեպ հակառակորդի կողմից ևեռվող մարտահրավերների պայմաններում...

«Ատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խումբն այս անգամ՝ 2018 թվականի հունիսի 6-ին, Արցախյան շարժման 30-ամյակի շրջանակում, եղավ ԱՀ ՊԲ Հարավ-արեւելյան ուղղության թիվ 59703 զորամասում՝ իր կազմում հիմնական անդամներից ունենալով ԱՀ ԱԿԱՀՄ եւ միաժամանակ հիշյալ խմբի ղեկավար՝ տողերիս հեղինակին, ԶԱՀՄ նախագահ Արթուր Առստամյանին, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանին՝ «Արցախի բալիկներ» համույթով հանդերձ, եւ որպես ուղեկցող սպա՝ ՊԲ ռազմահայրենասիրական դաստիարակության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի կապիտան Նունե Աբաղյանին, ՊԲ «Գոյամարտ» հեռուստածրագրի օպերատոր Դավիթ Քեշիշյանին, Ղարաբաղյան պատերազմի վետերանների միության Արցախի մասնաճյուղի ղեկավար Ռոման Բալայանին:

Տեղում մեզ, թող այսպես ասեմ՝ հին ծանոթի պես դիմավորեց զորամասի հրամանատար, փոխգնդապետ Մարտին Ջհանգիրյանը, ում հետ հանդիպելու առիթներ Նախաձեռնող խումբը ոչ մեկ անգամ ունեցել է եւ այն ժամանակ, երբ նա հրամանատարում էր ՊԲ ուրիշ զորամասում: Հանդիպումն սկսվեց հրամկազմի անդամների՝ հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ Պարգեւ Մարտիրոսյանի եւ մյուս սպաների հետ ծանոթությամբ եւ մեր ծրագրին նրանց ծանոթացնելուց:

Այնուհետեւ ընդարձակ շարահրապարակում տեղի ունեցավ այցի, այսպես ասած, պաշտոնական մասը, որն սկսվեց զորամասի հրամանատարի բարեգալստյան ողջույնով, որն իր մեջ պարունակում էր եւ… մեր խմբի կարելի է արդեն ասել՝ տարիների՛ «կարեւոր ու պահանջված» աշխատանքի գնահատականը, աշխատանք, որի հիմնական նպատակը նպաստելն է ժողովրդի ու բանակի, մեր հասարակայնության ու զինվորականության միջեւ կապի ամրապնդմանը:

Հրամանատարի խոսքին հաջորդեցին զորամաս ժամանածներիս ելույթները, կամ ավելի ճիշտ՝ համառոտ զրույցը հայրենասիրության երակով ու շնչառությամբ լի սրտաբուխ լեզվով…Մեր խոսքում կար ե՛ւ գերազանց ծառայության ու զինվորական եղբայրության, ե՛ւ առաջնագծում, դիրքային ծառայությունում շատ պահանջված՝ զենքի հետ զգուշության եւ, որ ամենակարեւորն է, սահմանի պաշտպանության խնդրում աչալրջության կոչ, իհարկե՝ նաեւ ժամկետային զինծառայությունը պատվով ավարտելու եւ ողջ ու առողջ տուն վերադառնալու՝ հարազատի տված խորհուրդ …

Ինձ համար շա՜տ հաճելի էր զինվորներից գոնե մի քանիսի հետ մոտիկից ծանոթանալը, որոնցից մեկն էլ /ներկայացնեմ ինչպես հարկն է/ ՊԲ Իններորդ պաշտպանական շրջանի սերժանտային խորհրդի նախագահ՝ սերժանտ Արարատ Դիլոյանն էր: Նախաձեռնող խմբի, ինչպես նաեւ մեր ԱՀ ԱԿԱՀՄ անունից ես նրան պարգեւատրեցի հատուկ շնորհակալական նամակով, որն իրականում հղված է տղայի ողջ գերդաստանին՝ հայրենիքի համար օրինակելի զավակ դաստիարակելու համար: Արարատն այն կուղարկի տուն ու, պարզ է, հպարտությամբ լցնի հարազատների սրտերը…

ՊԲ-ում արդեն տարիուկես է, ինչ ծառայում է սերժանտ Արթուր Մանուկյանը: Նա Սոչիում էր ապրում, բայց վերադարձավ՝ կատարելու զինվորական պարտքը հայրենիքի հանդեպ: Ասում է Արցախում իրեն զգում է ինչպես տանը, որովհետեւ

այն եզերք է հայրենական…Անկեղծ կլինեմ. ինձ համար դա մեծագույն գնահատականն էր, որ ականջիս հասավ այդ օրը՝ տրված փոքր հայրենիքիս, նրա բանակին ու ժողովրդին:

Շարքային Էդվարդ Հակոբյանը, որ զինծառայության մեջ է արդեն 11 ամիս, պատմում էր իրենց առօրյայից, ասում է՝ մեր զորամասում բոլորս էլ դիրքապահ զինվորներ ենք…, եւ յուրաքանչյուրս, ասում է, տասնչորս օր՝ այնտեղ ենք լինում, նույնքան էլ՝ զորամասում, եւ ավելացնում է. «Սկզբում է դժվար ծառայությունը, նորմալ ֆիզիկական ու մարտական պատրաստությամբ անցածի համար խնդիր չէ դրան հարմարվելը, պարզապես կամք է հարկավոր մի տեսակ դիմակայելու ջիղ ասեմ թե ինչ…եւ իհարկե՝ նոր իրադրության հետ հաշվի նստելու հասկացողություն»:

Սերժանտներ Լեւոն Սարդարյանի եւ Մարտունի Ենգիբարյանի համար «հեչ բան» է մնացել առջեւում. մեկով պակաս՝ մեկով ավել՝ ամիս անց զորացրվում են տուն. ողջու՛յն, հարազատներ, պարզերես ենք գալիս ձեր գիրկը՝ հետո էլ քաղաքացիակա՛ն ճակատում սատարելու, նպաստելու հարազատ հանրապետության հզորությանը: Մարտունենց տանը 10 երեխա է մեծացել-մեծանում. երեք քույր են, յոթ եղբայր; Չէ, դուք պատկերացնու՞մ եք… Բանակում էլ ծառայում են երկու եղբորով՝ տարբեր զորամասերում:

Ի դեպ, այս այցն առիթ դարձավ, որ չնախատեսված՝ ծանոթանանք եւ մի բարձրաստիճան զինվորականի հետ: ԱՀ ՊԲ հրամանատարի՝ թիկունքային ծառայության գծով տեղակալ /բանակի թիկունքի պետ/, գնդապետ Բորիս Դավիդովի մասին է խոսքս: Զրուցեցինք շատ հարցերի շուրջ՝ այդ թվում անդրադառնալով եւ զինվորական ծառայության կենցաղային ասպեկտին: Նա շատ կարեւորեց զինվորի՝ նաեւ մաքրության «ճակատում» պահանջվածը լիովին կատարելու պատրաստակամությունը, որով, պատահում է, շատ չեն օժտված լինում առանձին զինծառայողներ…Գուցե դա կարելի է բացատրել եւ տանն

ստացած դաստիարակությամբ, բայց առողջ ու հաղթ զինվոր լինելու համար ոչ միայն մաքրության, այլեւ կենցաղային մյուս բոլոր կանոնները պահպանելը խիստ անհրաժեշտություն է: Ու ես հիշեցի դիրքերում այդ կանոններին հետեւող մեր հրաշալի տղաներին, նրանց լվացած ու չորացման համար փռած կիսագուլպաները, մայկաները, թաշկինակները հիշեցի…Պարտաճանաչ զինվորը պարտաճանաչություն է դրսեւորում ամեն տեղ, ամեն պարագայում:

Ի դեպ, մաքրության հարցում սույն զորամասում «հայտնաբերեցի» զգալի փոփոխություններ: Նախկին այցերի ժամանակ նկատել էի որոշակի թերություններ, ինչի մասին նույնիսկ խոսել էի ՊԲ հրամանատարի հետ, ու հիմա տեսնելով, թե դեպի լավն ինչքան ու ինչպես է փոխվել վիճակը, շատ ուրախացա:

Դե, ինչ, թերեւս ասելու բան արդեն քիչ մնաց: Մնում է ավելացնել, որ իրականացրինք զորամասեր մեր բոլոր այցերին հատուկ, օրվա ծրագրի պարտադիր ու անբաժան մաս հանդիսացող մշակութային միջոցառում՝ համերգ: «Արցախի բալիկներ» համույթի անունը, որ տվի հոդվածի սկզբում, հավանաբար, այդ մասին արդեն հուշել է ընթերցողին: Եվ ինչպես միշտ՝ այս անգամ էլ մեզ հիացրեց զինվորների թափով պարը՝ մեզ հետ միասին:

Համերգի ավարտին ես մեր կազմակերպության՝ ԱԿԱՀՄ, եւ իհարկե՝ Նախաձեռնող խմբի, անունից հինգ պատվոգրով, երկու շնորհակալագրով, ինչպես նաեւ իմ հեղինակած գրքերով պարգեւատրեցի ամենօրյա ծառայությունում եւ…եւ համերգու՛մ, այո, աչքի ընկած զինվորներին: ԶԱՀՄ-ի նախագահն էլ երեք զինվորի հանձնեց կազմակերպության շնորհակալագիրն ու Նոր կտակարան հոգեւոր գիրքը:

Չգիտեմ անգամ կարեւոր է սա շեշտել թե ոչ՝ բայց մենք էլ պատվոգիր ստացանք զորամասի հրամանատարության կողմից, ինչի համար հրապարակավ հայտնում եմ Նախաձեռնող խմբի խոր երախտագիտությունը:

ՄԵՐ՝ ԱՄԻՍԸ ՄԵԿ... ՏՈՆԱԿԱՆ ՕՐԸ

Վերջերս Պաշտպանության բանակի հերթական զորամաս կատարած այցի ընթացքում մի նոր միտք ու զգացողություն բացահայտեցի. այն՝ որ ինձ համար Աստծո բոլոր օրերը մեկ են: Սովորական լինելու իմաստով... Մեկ են՝ յուրաքանչյուր ամսվա այն մեկ օրից, այն առավոտից, երբ քնից արթնանում եմ հոգեկան այնպիսի լիցքով ու զվարթ տրամադրությամբ, ասես տոնի պիտի գնամ: Իրականում հենց այդպես էլ լինում է. ղեկավարածս խմբի հետ այդ օրը մեկնում եմ զորամաս, եւ ինձ թվում է, թե ինքս էլ եմ, կներեք, զինվոր, եւ գնում եմ մասնակցելու մարտական պատրաստվածության ստուգատեսի...

Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակի նախօրյակն էր, եւ այդ պատմական ու արժանահիշատակ իրադարձության հետ էր կապված «Սատարում հարազատ բանակին» Նախաձեռնող խմբի հիշյալ այցը Պաշտպանության բանակի թիվ 46677 զորամասի առանձին տանկային բրիգադ:

Խմբում մեր հիմնական անդամներից ներկա էին ձեր խոնարհ ծառան, Զոհված ազատամարտիկների հարազատների միության նախագահ Արթուր Առստամյանը եւ նույն կազմակերպության անդամ, զոհված ազատամարտիկի այրի Լաուրա Նասիբյանը, Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանը, Պաշտպանության բանակի ռազմահայրենասիրական դաստիարակության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի սպա՝ կապիտան Նունե Աբաղյանը:

Խումբ էին ներառված եւ ԱՀ առողջապահության նախարարության երկու գլխավոր մասնագետներ, Ստեփանակերտի մշակույթի տան մեներգիչ Մավրիկ Ավանեսյանն ու ձայնային

ռեժիսոր Ալբերտ Նասիբյանը: Ունեինք, սակայն, եւ իսկական հյուրեր, այն էլ շա՜տ հեռվից՝ Լիբանանից… Տեղի Հայ ազգային գվարդիայի /ՀԱԳ/ անդամ Սեւակ Դեմիրճյանն էր ու հիասքանչ մեներգող Սուրեն Աճեմյանը, որի հետ մեր առաջին հանդիպումն էր… Ընթերցողը երեւի հասկացավ, որ վերջին փաստի ընդգծումն ինքնանպատակ չէր, որ հուշում է այն մասին, թե Սեւակին ճանաչում էինք այդ հանդիպումից շատ առաջ էլ… Իրո՛ք այդպես է. մեկ թե երկու տարի առաջ նա եկել էր Արցախ եւ այցելեց մեր՝ Անհայտ կորած ազատամարտիկների հուշաթանգարան, բայց տեսնելով, որ «ոտքի վրա» ենք՝ ուղեւորվում ենք բանակի զորամասերից մեկը, ոգեւորված խնդրեց՝ իրեն էլ վերցնենք մեզ հետ…Պայմանավորվեցի Պաշտպանության նախարարության համապատասխան օղակի ղեկավարի հետ եւ թույլտվություն առնելով՝ ճանապարհվեցինք սփյուռքի մեր հայրենակցի հետ…Եվ ահա մեր երկրորդ հանդիպումն ու նրա երկրորդ այցը զորամաս: Թե երկուսով որքա՜ն էին իրենց երջանիկ զգում /պարզ է՝ առանձնապես Սուրենը/, դժվարանում եմ նկարագրել:

Զորամասում մեզ դիմավորեց բրիգադի հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ, փոխգնդապետ Լեոնիկ Ասրյանը: Ծանոթացանք եւ հրամանատարական կազմի մյուս անդամների հետ, նրանց ծանոթացրինք մեր այցի նպատակին եւ այդ շրջանակում ծրագրվածին;

Կազմակերպեցինք երկժամյա համերգ՝ վերոնշյալ երգիչների հրաշալի կատարումներով: Ի դեպ, ինչպես միշտ՝ համերգին ակտիվ մասնակցում էին եւ զինվորներից շատերը; Դե, եթե անգամ երգող էլ չգտնվի նրանց շարքերում, հրաշալի պարողներ մի՛շտ են լինում, եւ թնդում են հայկական երգն ու պարը:

Համերգից սկսեցի, բայց մինչ այդ, հասկանալիորեն, զինվորական կոնտինգենտի առջեւ, ինչպես նմանատիպ բոլոր այ-

ցերի ժամանակ, տեղի ունեցան հայրենասիրական բնույթի ելույթներ, զրույցներ, պատգամներ: Առանձնակի հուզաթաթախ երանգներ հնչեցին Սեւակ Դեմիրճյանի եւ Սուրեն Աճեմյանի «ուղերձներում»՝ ուղղված պետական սահմանն աչալրջորեն պահող զինվորներին ու սպաներին:

Այնուհետեւ բաժանեցինք մեզ հետ տարած նվերները: Մեր կազմակերպության՝ ԱԿԱՀՄ անունից ես երեք ժամացույց ու երեք պատվոգիր հանձնեցի օրինակելի ծառայությամբ աչքի ընկնող վեց զինվորի, երեք զինվորականի էլ շնորհակալագրով պարգեւատրեց Զոհված ազատամարտիկների հարազատների միության նախագահ Արթուր Առստամյանը:

Մեզ հետ զորամաս այցելած՝ առողջապահության նախարարության ներկայացուցիչներն էլ հանդես եկան առողջ ապրելակերպի վերաբերյալ դասախոսությամբ, ապա զորամասի բուժկետին հանձնեցին տարբեր դեղորայքներով եւ առաջին բուժօգնության պարագաներով լի մի արկղ:

Այո, հայրենիքի նվիրյալ զինվորների հետ հանդիպումը տոնական տրամադրություն էր հաղորդել ներկա բոլորին, ինչն էլ ապացուցում է սույն հոդվածի սկզբում արտահայտածս մտքի ճշմարտացիությունը…

ԱՌԱՆՁԻՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՏԱԿՈՒՄ
ԱՄԵՆ ԻՆՉ ԱՅՆՊԵՍ Է՝ ԻՆՉՊԵՍ ՈՐ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

Այս միտքն էր մեզ ուղեկցում վերադարձի ողջ ճանապարհին՝ հպարտությամբ լցնելով մեր սրտերը: Որովհետեւ ու՞մ չի հայտնի, թե բանակի համար ինչ արժե վստահելի հետախուզությունը ոչ միայն պատերազմական իրադրությունում, այլեւ խաղաղության, մեր դեպքում՝ բավականին փխրուն խաղաղության տարիներին: Իսկ տարիներն, ինչպես գիտենք, կազմված են հարյուրավոր օրերից...

«Ատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խումբը հետախույզ տղաների հետ հանդիպման գնաց վերջերս՝ կազմում ունենալով խմբի ղեկավարիս՝ Արցախի Հանրապետության Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության երեք անդամի հետ միասին, ԱՀ զոհված ազատամարտիկների հարազատների միության նախագահ Արթուր Առստամյանին՝ նույն կազմակերպության նույնպես երեք անդամի հետ, «Միացյալ Հայաստան» հայրենասիրական կազմակերպության նախագահ Արթուր Գրիգորյանը, ԱՀ առողջապահության նախարարության ՊԱ գործակալության գլխավոր մասնագետներ Մարգարիտա Շահնազարյանը, Մարինե Մովսիսյանը, ԱՀ ՊԲ ռազմահայրենասիրական դաստիարակության բաժնի սպա՝ կապիտան Նունե Աբաղյանը, Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի 4-րդ կուրսի ուսանողուհի Լուսինե Մարտիրոսյանը, Արցախի հանրային հեռուստառադիոընկերության եւ ՊԲ «Գոյամարտ» ծրագրի լրագրողներ, օպերատորներ:

...Գումարտակի հրամանատարն արձակուրդում էր, իրազեկվելով, սակայն, մեր այցի մասին, հեռախոսով ուրախություն հայտնեց այցի վերաբերյալ, ապա եւ հաջողություն մաղթեց բոլորիս: Այնպես որ՝ գումարտակ հասնելուց մեզ դիմավո-

րեց հրամանատարի պաշտոնակատար՝ մայոր Միշա Բալայանը եւ ԱՀՏԱ գծով տեղակալ՝ կապիտան Սարգիս Աղջոյանը:

Քանի որ մեր հերթական այցը ՊԲ զորամաս այնքան էլ շատ չէր հերթական ա՛յն առումով, որ կապված էր մեր ժողովրդի Անկախության երկու տոների հետ՝ Արցախի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության, ուստի հանդիպումն սկսվեց հենց այդ առնչությամբ շնորհավորական խոսքից, որով հանդես եկան խմբի՝ այդ օրվա համարյա բոլոր՝ հին ու նոր, անդամները:

Բայց, իհարկե, մեր ելույթները չէին կարող սահմանափակվել լոկ դրանով... Երբ այցելում ես հայրենյաց զինվորին, ասելու այնքա՜ն շատ բան ես ունենում: Օրինակ՝ այն, թե նա ինչպես է իրեն զգում նոր միջավայրում, բնականաբար էլ՝ նոր պայմաններում, հեռու՝ տնից ու հարազատներից: Թե արդյո՞ք հեշտ է հարմարվել /հարմարվում/ զինվորական կարգապահության ու ռեժիմին: Դիրքերում, գուցե եւ անդին / հետախույզ է, չէ՞/լինելուց կարողանու՞մ է պահանջվածին կենտրոնացած եւ աչալուրջ գործել, չէ՜ որ ոչ պատերազմական օրերին էլ չեն բացառվում ամենատարբեր վտանգները մեր չար ու անկանխատեսելի հակառակորդի կողմից...

Հենց նման անկեղծ ու անմիջական զրույցներն են, որ «բացում» են զինվորի հոգին...Ու երբ նման խոսակցության ժամանակ նա ուղիղ նայում է աչքերիդ ու ներքին համոզմունքով հավատացնում, որ իր մոտ ամեն ինչ կարգին է, այսինքն՝ այնպես է, ինչպես որ պահանջվում է լինել, հոգով թեթեւանում ես ու մտածում...ինչո՞վ երախտագետ լինես այս 18-20 տարեկան տղաներին, ովքեր մեծ բեռ վերցրած իրենց պատանեկան ուսերին, քեզ համար շարունակական խաղաղ ու հանգիստ օր են ապահովում: Մեր «քաղաքացիական» պարզ հարցին՝ ինչպես են գործերը գումարտակում, հրամանատարի պաշտոնակատարն ասաց այնպես՝ ինչպես որ պե՛տք է լինեն…

Ինչ մնում է առողջապահության նախարարության՝ մեզ հետ զորամաս եկած ներկայացուցիչներին, ապա հայրենասիրության ու մարտական բարձր պատրաստականության պատգամ-խոսքից բացի նրանք հանդես եկան նաեւ առողջապահական թեմայով զրույցով, որի հիմնական առանցքը կազմում էին առողջ ապրելակերպի գումարելիներն ու պահանջները: Իսկ հետո նրանք իրենց հետ բերած՝ բուժական պարագաներով արկղը հանձնեցին գումարտակի բուժկետին:

Այնուհետեւ սկսվեց մշակութային միջոցառումը: Տրվեց համերգ: Մեներգումով հանդես եկավ երգչուհի Լուսինե Մարտիրոսյանը, ում յուրաքանչյուր համար ունկնդիրներն ընդունում էին ծափերով: Բացված լայն պարաշրջանում իրենց շնորհքն էին ցույց տալիս եւ՛ հյուրերը, եւ՛ զինվորականները: Իր գեղեցիկ պարով բոլորիս, մասնավորապես, հմայեց կապիտան Սերգեյ Ավանեսովը, ում էլ բաժին ընկավ տարածս 5 պատվոգրերից առաջինը... Զինվորներին հանձնեցինք նաեւ շնորհակալագրեր. 10-ը, ինչպես նաեւ գրքեր, ես՝ մեր կազմակերպության անունից, 5-ն էլ Արթուր Առստամյանը՝ ԶԱՀՄ-ի կողմից: Զինվորների սրտովն էին օրվա պարգեւները…

Ես իմ հատուկ շնորհակալությունը պիտի հայտնեմ Ստեփանակերտի մշակույթի քաղաքային տան տնօրեն Ռաֆիկ Ավանեսյանին եւ ձայնային օպերատոր Ալբերտ Նասիբյանին, ով ապահովում էր համերգի երաժշտական կարգավորումը, ինչպես նաեւ մեզ գրեթե միշտ ուղեկցող «Գոյամարտ» ծրագրի լրագրողին ու օպերատորին, այս անգամ՝ նաեւ նրանց կոլեգաներին Արցախի հեռուստատեսությունից...

Եկեք բոլորովի ներդնենք մեր ուժերը՝ հայրենյաց պահապանների օրը նաեւ մե՛ր այցերով հետաքրքիր դարձնելու, նրանց զգացնել տալու համար, որ բանակն ու ժողովուրդը մեկ մարմին են, մեկ հոգի՝ եւ հասարակությունը կանգնա՛ծ է նրանց թիկունքին:

ԶՐԱՀԱՏԱՆԿԱՅԻՆՆԵՐԻ ՄՈՏ՝ ԱՄԱՆՈՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

«Սարարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբի համար յուրատիպ պարտականության է վերածվել տարվա յուրաքանչյուր տոն օրվա նախօրեին լինել Պաշտպանության բանակի որեւէ զորամասում՝ մեր սպաների ու զինվորների համար օրն այդ կարելվույն չափ կրկնակի՛ տոնական դարձնելու ... Ինքնըստինքյան հասկանալի է, որ ներկայանում ենք, ինչպես ասում են, ոչ դատարկ ձեռքով: Նվերները, որ տանում ենք մեզ հետ, մեծ լինեն թե փոքր՝ հատուկ տրամադրություն են հաղորդում զինվորներին, մի տեսակ տնային, ընտանեկան մթնոլորտ ստեղծում: Նրանք գիտեն, թե որքան սրտանց ենք մենք՝ հասարակության դեսպանորդներս, անում այդ գործը եւ գնահատում են այն ամենն, ինչին «հասնում է» ձեռքը մեր:

Առջեւում Ամանորն է, եւ ահա դեկտեմբերի 18-ին Նախաձեռնող խումբն, ինչպես միշտ՝ Պաշտպանության նախարարության հետ համաձայնեցված, եղավ Պաշտպանության բանակի Առանձին զրահատանկային գումարտակում:

Խմբի կազմում էին Նախաձեռնող խմբի ղեկավար՝ ԱՀ Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ, անհայտ կորած ազատամարտիկի մայր Վերա Գրիգորյանը, զոհված ազատամարտիկների հարազատների միության ներկայացուցիչներ՝ զոհված ազատամարտիկի մայր Յարուշա Հակոբյանը, զոհված ազատամարտիկի այրի Լաուրա Նասիբյանը, հանրապետության առողջապահության նախարարության վիճակագրական-վերլուծական բաժնի պետ Ագապի Հայրունին, Պաշտպանության բանակի ռազմահայրենասիրական բաժնի սպա՝ կապիտան Նունե Աբաղյանը,

ՊԲ «Գոյամարտ» ծրագրի հեռուստաօպերատոր Միքայել Պետրոսյանը, «Մարտիկ» թերթի լրագրող Դավիթ Ավանեսյանը, Ստեփանակերտի մշակույթի տան մենեջերգիչ Մավրիկ Ավանեսյանը, ՊԲ Առանձին զրահատանկային գումարտակի նախկին ծառայող՝ երգիչ Գեւորգ Միրզոյանը, ՊԲ վարորդ Մերուժան Գրիգորյանը:

...Մեզ դիմավորեցին զորամասի հրամանատար՝ փոխգնդապետ Հունան Հայրումյանը, հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ՝ մայոր Միքայել Աբրահամյանը, ինժեներական ծառայության սակրավորային դասակի հրամանատար՝ ավագ լեյտենանտ Արայիկ Ղուլյանը:

Մենք դեռ բերան չբացած՝ իրենք իսկույն գլխի ընկան, որ ներկայացել ենք տոնական այցով...

Հանդիպեցինք եւ զրույց ունեցանք զորամասի սպայական կազմի հետ: Ընդ որում՝ հանգամանքների բերումով ծանոթանալով եւս մի հիանալի զինվորականի հետ, ով այդտեղ էր՝ զորամասում ընթացող քննությունների հետ կապված: Խոսքը Պաշտպանության բանակի մարտական պատրաստվածության բաժնի պետ՝ գնդապետ Սուրեն Սուրենյանի մասին է, ով մեզ հետ կարճ զրույցում ասաց, որ գոհ է ու համոզված, որ մեր զինվորականները, որպես ժամանակակից բանակի զինվորներ ու սպաներ, հաջողությամբ են ուսումնասիրում ու տիրապետում նորագույն զենքերին, ձգտում մարտական պատրաստվածության բարձր որակի:

Զորամասում շրջելուց հետո հանդիպեցինք զինվորական հիմնական կոնտինգենտի հետ: Ինչպես միշտ՝ ջերմ էին զրույցները զինվորների հետ: Վերահաս Սուրբ Ծննդյան եւ Ամանորի կապակցությամբ շնորհավորեցինք նրանց ու հանձնեցինք վեց արկղ նվերներ, որ հայթայթել էինք հանրապետության ֆինանսների եւ առողջապահության նախարարություն-

ների օգնությամբ: Վերջին հասցեից տրամադրված երկու արկղերում բժշկական սարք ու պարագաներ էին, որոնք տեղ գտան զորամասի բուժկետում...

Մենք մայրական պատգամներ հղեցինք մեր պատանի ունկնդիրներին՝ տարեմուտյան մաղթանքները խառնելով գերազանց ծառայության պատվերով, ինչպես նաեւ՝ զենքերի հետ զգույշ վարվելու խորհրդով: Առողջապահության նախարարության ներկայացուցիչ տիկին Ագապին հանդես եկավ առողջ ապրելակերպին նվիրված հետաքրքիր դասախոսությամբ, խոսքի վերջում այս պատգամը հղելով տղաներին. «Երկու տարի զորամասն է լինելու ձեր տունը, սիրելի զինվորներ, եղեք միմյանց հանդեպ ուշադիր՝ ինչպես եղբայրն է լինում եղբոր նկատմամբ ...Լավ ծառայեցեք՝ նախ գործի ու հայրենիքի շահի համար, ապա՝ որպեսզի բանակի մասին լավ հիշողություններով վերադառնաք հայրական օջախները»:

Երբ որպես մեր բոլոր հանդիպումների անհրաժեշտ ու պարտադիր բաղադրիչ՝ սկսվեց մշակութային «ժամը», բոլորի տրամադրությունը դարձավ ավելի «մարտական»: Համերգը բարձր մակարդակով անցկացնելու համար եռանդ չխնայեցին «մեր» երգիչները՝ Գեւորգն ու Մավրիկը: Ինչպես խոստովանեց առաջինը՝ իր համար մեծ պատիվ էր ու հաճելի երգել հարազատ զորամասում՝ ինչպես տարիներ առաջ, երբ շարքային զինվոր էր այնտեղ: Եվ այնուամենայնիվ, մշակութային ծրագրի «մեխը» միշտ էլ պարերն են լինում, որովհետեւ պարաշրջան են նետվում բոլորը. սպա թե զինվոր, «տնեցի», թե «հյուր»...

Համերգից հետո Վերա Գրիգորյանն իր գլխավորած ԱՀ ԱԿԱՀՄ անունից նույն հասարակական կազմակերպության «Հայրենիք եւ հավատ» մեդալով պարգեւատրեց գնդապետ Սուրենյանին, զորամասի հրամանատարին նվիրեց իր հեղինակած՝ «Երկրի ապավենը» գիրքը, որում նկարներով ու հա-

մապատասխան տեքստով ներկայացված է եւ իրենց զորամասը: Նույն ձեռքից պատվոգիր ստացավ հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալը: Տասը զինվորներ շնորհակալագրերի արժանացան ԱԿԱՀՄ եւ հինգը ԶԱՀՄ կողմից:

Բարձր գնահատելով «Սատարում հարազատ բանակին» կոչի Նախաձեռնող խմբի աշխատանքն ընդհանրապես, եւ մասնավորապես՝ «օրվա իրադարձությունն» այցի շրջանակում, զորամասի հրամանատար, գնդապետ Հունան Հայրումյանը խմբի անդամներին պարգեւատրեց զորամասի պատվոգրով: Նրա ամփոփիչ խոսքում, ի դեպ, կային հիանալի մտքեր՝ հայրական գորովո՛վ ուղղված զինվորներին... ինչը մեզ շատ դուր եկավ: Հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ, մայոր Աբրահամյանն էլ նրանց կոչեց ծառայությունում է՛լ ավելի հմտանալուն:

Ժամանակ կորզելով հանդիպման չափազանց հագեցված ծրագրից, ինձ հաջողվեց «առանձնազրույց» ունենալ երեք զինվորի հետ:

Շարքային Կարեն Հայրապետյանը հինգ ամիս է՝ ինչ ծառայում է: Երբ հարցրի, թե ինչի է հասել այդ ընթացքում, ժպտաց ու լակոնիկ ոճով ասաց. «Ձենքին տիրապետել եմ, կոփվել եմ, ուժեղացել եմ»: Մնացածը կարդացի աչքերի փայլում. տղան իրոք լավ հարմարվել է զինվորական կյանքին, պատասխանատվություն է զգում իր գումարտակի, բանակի եւ հայրենիքի առջեւ: Խոսում է տնեցիների հետ. հրամանատարությունը զինվորներին թույլ է տալիս օգտվել հեռախոսից: Ծնողների միակ արու զավակն է, տանը հորից ու մորից բացի իրեն են սպասում երեք քույրերը...

Շարքային Մելս Ղազարյանի ծառայության առաջին տարին լրացել է: Այդ ընթացքում երկու անգամ եղել է արձակուրդում...Նրան էլ նույն հարցն եմ տալիս ու ստանում ավելի

«հանգամանալից» պատասխան. «Բանակ մտնելով նախ եւ առաջ ձեռք եմ բերել լավ ընկերներ: Ընկերոջ վստահելի արմունկն զգալն ընդհանրապես մեծ բան է, բանակում՝ հատկապես, որտեղ, ասենք՝ մարտական իրադրությունում, կարող ես հայտնվել ամենաբարդ իրավիճակներում: Այստեղ այլ կերպ ես սկսում ընկալել կյանքը... Սովորում ես ամեն պարագայում սառը գլխով դատել: Զբաղվում եմ սպորտով, ազատ ժամանակ լինելուց գիրք եմ ընթերցում: Կարդալ ես սիրում եմ»: Մելսն էլ է տան միակ արու զավակը: Ընդ որում՝ հայրը վախճանված է: Սպասողներ ունի՝ մայրիկը, տատիկն ու քույրիկը...

Շարքային Մարատ Գրիգորյանը զրահատանկայինում է մեկ ամիս, մինչ այդ 3 ամիս ծառայել է ՊԲ 2-րդ Պաշտպանական շրջանում: Հատուկ դիպուկահար է՝ եւ դրանով ասված է ամեն ինչ: Տանը /հայրիկը, մայրիկը, տատիկն ու եղբայրը / արդեն իսկ հպարտանում են նրանով...

Կարճ ասած, այցից ստացած հարուստ տպավորություններով ենք հրաժեշտ տալիս զորամասին՝ վերադարձի ճանապարհին ունենալով եւս մեկ հուզիչ հանդիպում...

*

Գյուղ Ջիվանի: Եթե ճիշտ է, որ ագռավներն ապրում են 400 տարի, ինչում, թերեւս, կասկածել էլ կարելի է, ապա երեւի... միայն նրանք են հիշում, թե քառորդ դար առաջ ինչպես էր կոչվում գյուղն այս. Ղաջար:

Գյուղ Ջիվանի՜՝ թանկ արյան գնով վերստին հայացա՛ծ: Մեր այցի օրն այնտեղ պիտի բացվեր կյանքները հայրենիքի զոհասեղանին դրած 35 քաջերի Փառքի եւ Անմահության ցուցադրափեղկը, որի հովանավորն է դպրոցի նախկին սան Գևորգ Միրզոյանը: Հանդիսավոր միջոցառումը կազմակերպել էր դպրոցի տնօրեն տիկին Սաթենիկը: Այդ գյուղում է բնա-

վորված եւ մեր խմբի անդամ՝ շնորհալի երգիչ Գեւորգ Միրզոյանի ընտանիքը: Միջոցառման ընթացքում Գևորգը գյուղի ութ բազմազավակ ընտանիքներին հուշանվերներ հանձնեց: Ակտիվ համագործակցության և գործունեության համար ես Գևորգ Միրզոյանին պարգևատրեցի ԼՂՀ ԱԿԱՀՄ ՀԿ «Հայրենիք և հավատ» մեդալով, դպրոցին համեստ նվերով և իմ հեղինակած գրքերով, իսկ ԼՂՀ ԶԱՀՄ ՀԿ իրենց կազմակերպության շնորհակալագրով:

Ընձեռված հնարավորությունից օգտվելով, ես գյուղի բազմազավակ ընտանիքների համար հայթայթածս հագուստեղենն էի ութ արկղներում վերցրել ինձ հետ եւ դրանք հանձնեցի նրանց: Հիշատակի միջոցառումը հուզիչ էր ու պարտավորեցնող: Մենք՝ ապրողներս, միշտ պիտի հիշենք ու մեր սրտերում պահենք նրանց՝ հայրենյաց բոլոր նահատակներին:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ՝
ԳՐՔԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՂԻՆ

Մենք նրա հետ մեկ անգամ չէ, որ Պաշտպանության բանակի զորամասեր ենք այցելել: Եվ ամեն անգամ նա՝ տիկին Ագապին, հետաքրքիր բան է ունենում ասելու զինվորներին: Առողջապահության նախարարության աշխատողի նրա դասախոսություններն ու պարզապես մոր եւ քաղաքացու խոսք-պատգամը միշտ թեթեւ ու հաճույքով են լսվում...

Եվ ահա, զորամաս հերթական այցի նախօրեին, երբ ճշտում էինք «Սատարում հարազատ բանակին» Նախաձեռնող խմբի անդամներից յուրաքանչյուրիս՝ տվյալ այցի կոնկրետ անելիքը, տիկին Ագապին հանկարծ հարցրեց.

-Գուցե սխալվում եմ՝ գուցե ոչ, տիկին Վերա, բայց ամեն հանդիպման մի տեսակ մտահոգության ստվեր եմ տեսնում Ձեր դեմքին... Գո՞ւցե ունեք խնդիր, որում կարող եմ օգտակար լինել...

Ճիշտն ասած, զարմացա. ախր, մեղմ ասած, հաճախ չէ, որ կարող ես հանդիպել այդ աստիճան նրբանկատ վերաբերմունքի...Ասացի՝ արդեն իսկ օգնում եք՝ մեզ հետ տղաների մոտ գալով... Բայց նա կրկնեց հարցը.

-Չէ, դրանից բացի...Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

Եվ նրա հետեւողական անկեղծությունն ինձ մղեց փոխադարձման: Ցույց տվեցի «Երկրի ապավենը» գիրքը. «Տեսեք, ավարտվել է Ապրիլյան պատերազմով... Ընթերցողներին վերջում հայտնել ենք, որ գիրքը երկրորդ մաս էլ կունենա: Եվ ահա այն արդեն պատրաստ է, բայց...»:

Կես խոսքից հասկացավ: Հասկացավ եւ ինձ ավելի խոր զարմանքի մատնեց՝ ասելով. «Հովանավորման բաց խնդիր կա, ուրեմն... Եթե շատ մեծ գումարի հետ չէ կապված, ես ձեզ կաջակցեմ»: Պատկերացնո՞ւմ եք որքան ուրախացա: Հուզմունքս չէի կարողանում զսպել: Ախր եղել են մեծ հուսախաբության ու հիասթափության դեպ-

քեր... Կան, այո, մարդիկ, ունեւո՞ր կանայք ու տղամարդիկ, որոնց դուռը ծեծես էլ՝ բացել չունեն (նախ՝ սրտի, հետո, պարզ է, գրպանի «դուռը»): Իսկ այս մեծատառով կինը (համաձայնվեցեք՝ ելնելով արարքից) ինքը հետաքրքրվեց՝ ինքն էլ առաջարկում է իր օգնությունը: Ընդ որում, սա ես ուզում եմ հատուկ շեշտած լինել, ոչ միայն կամ ոչ այնքան ինձ համար, այլ իմ միջոցով՝ էլի մեր հարազատ բանակի: Հերոսական ու հաղթական բանակ, որի բացառիկ նշանակությունը երկրի լինելության խնդրում, հնարավորին չափ նաեւ նրա առօրյան, ձգտում ենք ներկայացնել մեր ժողովրդին՝ Նախաձեռնող խմբի ձեւաչափով նպաստելով բանակ-հասարակություն կապի շարունակական ապահովմանը եւ ամրապնդմանը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ՏԻԿԻՆ ԱԳԱՊԻ:

Մի քանի տվյալ՝ Ագապի Գառնիկի Հայրունիի կենսագրությունից:

Ծնվել է 1964 թ. Գեղարքունիքի Լուսակունք գյուղում: Դպրոցն ավարտել է ոսկե մեդալով, այնուհետեւ սովորել Երեւանի պետական բժշկական՝ այն ժամանակ ինստիտուտի բուժական ֆակուլտետը, 1996-ին «ընդհանուր բժիշկ» մասնագիտությամբ ավարտել է ինտեռնատուրան:

Արցախի առողջապահության նախարարությունում որպես տեղեկատվական-վերլուծական բաժնի բժիշկ-վիճակագիր է աշխատանքի ընդունվել 2003-ին՝ որոշ տարիների գործունեությունը համատեղելով Ա. Փակումյանի անվան պոլիկլինիկայում որպես տեղամասային թերապեւտ աշխատելու հետ:

Հիշյալ բաժնում աշխատել է նաեւ որպես բաժնի վարիչ:

2014 թվականից առ այսօր անընդմեջ հանդիսանում է նույն բաժնի ղեկավարը:

Նա պատշաճ հարգանք ու հեղինակություն է վայելում ինչպես նախարարության ոչ փոքր կոլեկտիվում՝ այնպես էլ ընդհանրապես Արցախի բժշկական աշխարհում: Որպես իրեն վստահված գործում բարեխիղճ ու պատասխանատու մասնագետ եւ պաշտոնյա՝ Ագապի Հայրունին պարգեւատրված է Արցախի Հանրապետության վարչապետի պատվոգրով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի խոսք....3
Հեղինակի կողմից....4
Գլխներիցդ մազ չպակասի, մեր արծիվ տղաներ....5
Եռատոնյան հանդիպումներ....8
Նախաձեռնող խմբի նոր նախաձեռնությունը ... .13
Հայրենասիրությունն ու բանակասիրությունը՝
կոնկրետ գործով....19
Անկախության օրվա նախօրեին այց զորամաս՝ հոգևոր նվերով....22
Հերթական հանդիպման բերկրանքը....27
Տարեմուտյան այց պաշտպանական շրջանի զորամաս... 31
Այց զորամաս՝ Հայոց բանակի օրվա առթիվ....35
Հայոց բանակի ստեղծման 26-րդ տարեդարձին
Նվերներ՝ սպաների երեխաներին....38
Պարգևատրում ընդհանուր կարևոր գործի մասնակիցներին....39
Ստեփանակերտի թիվ 6 դպրոցում՝ Արիության դաս....40
«Մայրություն» ՀԿ կազմակերպած ցուցահանդեսում....45
Հայոց բանակի օրը՝ անհայտ կորած ազատամարտիկների
ընտանիքների հետ....46
Նախ՝ հայենիքին ծառայելու զինվորական պարտքը,
հետո՝ մնացածը....50
Այց՝ զորամաս, որի խնդիրը սահմանը պաշտպանելն է... 53
Փոխհարստացում՝ միմյանցով....58
Ֆիզիկապես ու հոգեպես ձիգ և ամուր տղաների մոտ 61
Մեր՝ ամիսը մեկ… տոնական օրը....65
Առանձին հետախուզական գումարտակում ամեն ինչ այնպես է՝
ինչպես որ պե՛տք է լինի....68
Զրահատանկայինների մոտ՝ Ամանորին ընդառաջ.... 71
Շնորհակալության խոսք՝ գրքի տպագրությունը
հովանավորողին.... 77

Վերա Արմոյի Գրիգորյան

Երկրի Ապավենը -2

Անմոռաց հանդիպումներ

Խմբագիր՝	Սոֆյա Սարգսյան
Սրբագրիչ՝	Իրենա Մարտիրոսյան
Համ.շարվածքը՝	Լուսինե Մարտիրոսյանի
Էջադրումը՝	Ժաննա Ավանեսյանի
Կազմի ձեւավորումը՝	Մարինե Սայիյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16,
ծավալը՝ 5 տպ. մամուլ + 80էջ ներդիր, տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25, Ստեփանակերտ-2019